№ 157 ՇԱԲԱԹ, 23 ՅՈՒԼԻՍԻ
1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՇԱԲԱԹ, 23 ՅՈՒԼԻՍԻ № 157

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ

(39-ՐԴ ՏԱՐԻ)

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Յուլիսի 1-ից մինչեւ տարվայ վերջը 6 ռուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակադրոշմ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կոպ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ОБОИ)
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
Բաժանմունքը Թիֆլիսում, Գոլ. պր. 21, տուն Արտաշատ, Ընկ., տելեֆօն № 355.
Պահեստում միշտ կան մեծ քանակութեամբ ընտիր պաստառներ ամենավերջին սեզոնի
ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ԻՍԿԱԿԱՆ ԳՆԵՐՈՎ
8 կոպ. սկսած մինչև 6 ռ. իւրաքանչիւր ռուլօն:
Ունի պահեստներ Ռուսաստանի գլխաւոր քաղաքներում:
ՆՄՈՒՇՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՁՐԻ:
(Ն. շ.) աս. 207. 50—38

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՊԱՆԴՈՒԽՏՆԵՐ

I

Հայերի այն մասը, որ պանդխտում է Ամերիկայում, աւելի ու աւելի հաստատվում է այդ երկրում։

Եթէ պանդուխտների առաջին սերունդը ապրում է մի մշտական կարօտով դէպի իր հայրենիքը, երկրորդը աւելի պակաս է վերաբերվում դէպի նա, իսկ երրորդը զգում է իրան իբրև հարազատ անդամ նոր երկրի, որին նա ընտելացել է և որի ուրախութիւնները ու ցաւերը ընտանի են իր սրտի համար։

Ամերիկահայը կամաց-կամաց կտրվում է իր նախկին մայր հողից և կապվում է նոր երկրի հետ։

Եւ Ամերիկայում ապրող պանդուխտների թիւը ոչ միայն չէ պակասում, այլ և աւելանում է օրից օր նոր պանդուխտներով, որոնք շարունակում են թողնել մայր հայրենիքը՝ Ամերիկայում շահաւէտ զբաղմունքներ գտնելու նպատակով։

Երբ երեք տարի առաջ հրատարակվեց օսմանեան սահմանադրութիւնը, ամերիկահայերի մի մասը այցելութիւն արեց իր նախկին հայրենիքին և փորձեց վերահաստատվելու ծննդավայրերում, սակայն հայրենիքը անկարող էր առաջին օրերից իսկ տալ դիւրութիւններ նոր գործունէութիւնների համար, իսկ Ամերիկայի կազմակերպված կեանքը քաշում էր պանդուխտին դէպի իր գիրկը։

Եւ հայրենիք վերադարձած հայաստանցին նորից վազում էր դէպի շոգենաւ՝ Ամերիկա ճանապարհվելու համար։

Միևնոյն ժամանակ պանդուխտների վրա ծանր էր ազդում այն, որ սահմանադրական Թիւրքիան դեռեւս կատարեալ վստահութիւն չէր ներշնչում նրանց թէ արդարև սկսվել է խաղաղ կուլտուրական զարգացման հաստատ շրջանը Թիւրքիայի և մասնաւորապէս Թիւրքահայաստանի մէջ։

Ադանայի կոտորածը առաջին սոսկալի հիասթափութիւնն էր, որ յետ մղեց պանդուխտների սրտերը օսմանեան բարերարներից. իսկ այնուհետև ոչինչ ուրախալի լուրեր չեկան մայր երկրից, բացի այն խուլ շշուկից թէ քիւրդական և ուրիշ վայրենի ցեղերի ու հակասահմանադրական տարրերի զանգուածները սնում են յոյսեր վերադարձնելու դժոխային արհաւիրքների օրերը Եփրատի և Տիգրիսի աւազաններում։

Եւ այդպէս մի կողմից անմիջապէս տնտեսական շահը, միւս կողմից անվստահութիւնը դէպի օսմանեան բարեխղճութիւնը, ազդում են Թիւրքահայ պանդուխտների տրամադրութեան վրա և նրանք շարունակում են մնալ իրանց հայրենիքից դուրս։ Իսկ ժամանակը և Ամերիկայի քաղաքակրթական իրականութիւնը անում են իրանց զօրաւոր անելիքը՝ ընտելացնում են ուրարտացիների յետնորդներին քսաներորդ դարի եռուն կեանքին և գցում նրանց այդ կեանքի շարժումների և հոսանքների մէջ։

Ամերիկահայերի նոր սերունդը, որը ծնվել է Ամերիկայում, կամ բոլորովին չը գիտէ իր մայրենի հայ լեզուն, կամ գիտէ նրան շատ անբաւարար կերպով և նա արդէն եանկի է իր մտածողութիւններով և սովորութիւններով։

Այդպէս է վիճակը։ Այդպէս է իրերի ընթացքի տրամաբանութիւնը։

Մենք առաջ էլ արձանագրել ենք այդ երևոյթը և ուրիշ մի քանի խորհրդածութիւններ նրա առիթով։

Կը փորձենք դարձեալ շօշափել մի երկու հարց, որոնք կապված են ամերիկահայերի կացութեան և դիրքի հետ։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

21 յուլիսի

Պետերբուրգ.—Բարձրագոյնս ներումն ստացան սենատի առանձին ատեանից դատապարտված պաշտօնաթող գեներալ մայոր Րէյնբոտը և գնդապետ Կորոտկին։

Օգոստոսի սկիզբներին Ցարսկոյէ Սելօյում համառուսական աէրօկլուբը կազմակերպում է օդագնացութեան շաբաթ, որին մասնակցելու են Եֆիմովը, Լեբեդևը, Լէրխէն, Ուտոչկինը և Եանկովսկին։

Վիլհելմզհէֆ.—Գերմանական կայսրուհին հիւանդացաւ անգինայով։

Պարիզ.—Արտաքին գործերի մինիստրութիւնը կտրականապէս հրաժարվում է որևէ ցուցմունք տալ ֆրանս-գերմանական բանակցութիւնների ընթացքի վերաբերմամբ։ Մամուլը գերմանական լրագիրների յօդուածների ազդեցութեան տակ չափազանց գրգռված է և պահանջում է արագօրէն լուծել ճգնաժամը կամ հարցը յանձնել ալժեզիրաեան արձանագրութիւնները ստորագրած պետութիւնների քննութեանը։

Կայօն և Դեսելվը խորհրդակցեցին ֆրանս-գերմանական բանակցութեանց մասին, որոնք ընթանում են նորմալ։

Լոնդոն.—Լորդերի պալատ։ Լէնսդաունը յայտնեց, որ յուլիսի 25-ին Քերզօնը կառաջարկէ պալատին պարսաւանք յայտնել կառավարութեան։ Մինիստրական կուսակցութիւնը կարծում է, որ պարլամենտական բիլլը կանցնէ առանց նոր պէեր նշանակելու և պարսաւանք յայտնելը համարում է օպպօզիցիայի ցոյց։

Լիսաբոն.—Պատգամաւորների պալատի շինութեան առաջ ամբոխը բուռն ցոյցեր սարքեց կառավարութեան և պատգամաւորների դէմ։ Զօրքերը ցրեցին ամբոխը։

Բուդապեշտ.—Պատգամաւոր Օկօլիչանիի ճառի ժամանակ, որ յաճախ ընդհատում էր օպպօզիցիան, կառավարական կուսակցութեան կողմնակից Պալը աղաղակեց Իւստի կուսակցութեան կողմնակից Պօժգային՝ «Բոզ, Պօժգայ», և Պալին ապտակեց։ Տեղի ունեցան մի շարք ընդհարումներ կառավարական կուսակցութեան պատգամաւորների և ժուրնալիստների միջև։ Պալը և Պօժգայը իրար մօտ սեկունդանտներ ուղարկեցին։

Պորտ-օ-Պրէնս.—Նախագահ Սիմօնը փախաւ ամերիկական շոգենաւը։ Ցամաք իջնելիս խուժանը յարձակվեց նրան ուղեկցող պահակախմբի վրա։ Սպանված են հինգ մարդ։ Սիմօնի դուստրը թեթև վիրաւորված է։

ԳՈՐԾԱԴՈՒԼ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

21 յուլիսի

Լոնդոն.—Նաւահանգստային բանւորների բազմամարդ ժողովում յայտարարվեց գործադուլ։

Կահիրէ.—Գործադուլներն արգելք են լինում էլեկտրաքարշի երթևեկութիւնը վերսկսելու։ Տեղի ունեցան կատաղի ընդհարումներ ամբոխի և ոստիկանութեան միջև, որը դիմեց զէնքի։ Գործադուլները ուժով ցրվեցին. կան վիրաւորվածներ։

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ԲԱԼԿԱՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

21 յուլիսի

Կ. Պոլիս.—Ցետինիէում պաշտօնավարող դեսպանը հեռագրում է Բ. Դրան, որ մալիսօրներն ընդունեցին բոլոր պայմանները և 2 օր յետոյ կը սկսեն հայրենիք վերադառնալ։

Եանինայից հաղորդում են, որ Ֆիլատի մօտերը 90 ժանդարմներ ընդհարվել են 200 ալբանների հետ։ Երկու կողմից էլ կան կորուստներ։ Ուղարկված է օգնութիւն։

Բ. Դրան և մալիսօրների միջև կապված համաձայնութեամբ նախատեսված է.—ամնիստիա է տրվում հայրենիք վերադարձող ապստամբներին, ալբանները զինուորական ծառայութեան են մտնում Ալբանիայում, նշանակվում են ալբան-պաշտօնեաներ. բաշխվում են տուրքերը, 2 տարի շարունակ ալբաններն ազատվում են ամեն տեսակ հարկերից, Թիւրքիան պարտաւորվում է չաւելացնել մի պիաստր հարկը իւրաքանչիւր գլուխ տաւարից, թոյլատրվում է ալբաններին զէնք կրել, ուսումնարաններ են կառուցվելու պետութեան հաշւով, երկաթուղի է շինվելու Մալիսօրիայում, վերականգնվելու են քանդված կացարանները և եկեղեցիները, դրամական նպաստներ են տրվելու վնասված ընտանիքներին, իւրաքանչիւր մալիսօրի տրվելու է մի ֆունտ՝ հայրենիք վերադառնալիս և ամեն տարի, եգիպտացորեն ամեն մինին, մինչև եկող տարվայ հունձը։

Ռուսաց դեսպանատան առաջին թարգման Մանդելշտամը, շոգենաւից իջնելու ժամանակ, ընկաւ վերին տախտակամածից և ստացաւ լուրջ ջարդուածքներ։ Բժիշկների ասելով, ոսկորները չեն կոտրվել։

Ցետինիէ.—Մալիսօրների երեք զօրախմբեր վերադառնում են հայրենիք։

Թիւրքաց դեսպանը յուլիսի 20-ին Պօդգօրիցայում կարդաց մալիսօրներին Բ. Դրան առաջարկած պայմանները։ Մինիստր Զուկանօվիչը և գեներալներ Մարտինօվիչը և Վուկօտիչը կտրուկ կերպով մատնանշեցին, թէ Նիկոլայ Թագաւորը ցանկանում է, որպէսզի մալիսօրները Թիւրքական պայմաններն ընդունեն։ Մալիսօրները խնդրեցին մի օր ժամանակ տալ պատասխանի համար։ Գործակալութեան թղթակիցը անձամբ համոզվեց Պօդգօրիցայում, որ չեռնոգօրական կառավարութիւնը համակված է հարցի շտապ լուծմանը օժանդակելու հաստատուն մտադրութեամբ։ Սակայն մալիսօրների կողմից երևան է գալիս դժուարութիւն, որովհետև նրանք չեն հաւատում Թիւրքիային։

Աթէնք.—Աթէնքի գործակալութիւնը հաղորդում է, որ Եանինայում ժողոված Էպիր նահանգի քրիստոնեաների ներկայացուցիչները դիմել են Թիւրքաց կառավարութեանը մի ուղերձով, որով խնդրում են համահաւասար իրաւունքներ տալ պետութեան բոլոր ազգութիւններին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՈՒՍՈՒՑՉՈՒԹԵԱՆ ԽԱԽՈՒՏ ՎԻՃԱԿԸ ԵՒ ՆՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Եթէ մենք մի ակնարկ ձգենք ընդհանրապէս հայ ուսուցչութեան անցեալի և ներկայի վրա, կը նկատենք, որ նա եղել է սկզբից և է դեռ մինչև այժմ նեղ դրութեան, անբարենպաստ պայմանների մէջ, կը նկատենք միաժամանակ, որ նա ընդհանուր առմամբ սօցիալական կեանքում, կանգնած չը լինելով իր ցանկալի և վեհ կոչման բարձրութեան վրա, չէ ունեցել այն բեղմնաւոր գործունէութիւնը, որը շատ մեծ գործ կարող էր կատարած լինել մեր ազգի ու խաւար հասարակութեան համար։ Սա մի իրողութիւն է և այդ մասին շատ-շատ է գրվել մամուլի էջերում, շատ է խօսվել։ Ահա այդ իսկ դրութեան մէջ պէտք է որոնել այն միակ պատճառը, որ հայ ուսուցչութիւնը չէ կարողացել կարիքներով ծանրաբեռնված, անելանելի պայմաններով աչք բանալ առօրեայ պահանջներից ու հոգսերից, չէ կարողացել, աւելի լաւ է ասել՝ հնարաւորութիւն իսկ չէ ունեցել մօտիկից յարաբերութեան մէջ մտնել գրական աշխարհի հետ, իմանալ, թէ ինչ է կատարվել կամ կատարվում իր շուրջը։

Հայ ուսուցչութիւնը, աղքատ տնտեսականի պատճառով, անկարող է եղել լրագիրներ, գրքեր ստանալ, անհրաժեշտ գրականութիւնն ունենալ և այդպիսով ծանօթանալ ժամանակակից հրատապ հարցերի, վիճելի խնդիրների հետ գոնէ մանկավարժական ասպարէզում։

Վերջին 10-ամեակներում, մասնաւորապէս մօտիկ ժամանակում, երբ գրականութեան ահագին հեղեղ էր ստեղծվել, երբ ամեն մի խնդիր, ամեն մի երևոյթ լուրջ ուսումնասիրութեան նիւթ է դառնում, հետաքրքրութեան մեծ ու լայն շրջաններ են բացվում, գրական ասպարէզ են նետվում կնճռոտ ու վիճելի հարցեր, մի խօսքով

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒԼՆԻԱ*)

Երկու տարի առաջ տեղի ունեցած կիլիկեան արհաւիրքներու միջոցին զէյթունցին կռուելու պէտք չունեցաւ։ Տեղւոյն զօրքը և կառավարական պաշտօնեայք բամպակ կտրած, կարելի չեղաւ խնդիր մը ստեղծել Ադանայի կողմերուն նման։

Զէյթուն անսասան մնալով կրցաւ նոյնպէս իր շրջակայքը ապահովել ստոյգ ջարդէ մը։ Ձեռքն ունենալով հեռագրաթելը, ան սկսաւ պարզապէս կէս մը հրամաններ տեղացնել Ալբիստանի, Կոկիսոնի, Անտրընի և Մարաշի ազդեցիկներուն, որպէսզի լաւ պահեն իրենց քովի հայերը։ Սանկ, ապա թէ ոչ հետեւանքներուն չեն ուզեր պատասխանատու ըլլալու պէս բաներ մը։

Եւ արդարև բան մը չեղաւ այդ տեղուանքը։ Կոկիսոնի չէրքէզ աղաներուն լուր ղրկուած ըլլալով, անոնք ուշադիր գտնուեցան, որ մօտիկ հայերուն բան մը չըլլայ։ Շրջակայ մահմեդական գիւղերը առ աճի թողած փախած էին, մինչ զէյթունցիք արդարև, զիրենք խաղաղ ձգած ատեննին, բնաւ չարիք մը ընելու մտադրութիւն անգամ ունեցած չէին։

Զէյթունցոց այս քիչ շատ նպաստաւոր կացութիւնը իրենց կուսակցութեանց իւրացնելու և վերագրելու ջանքեր ըրած են 1895-ին հնչակեանները և վերջերս՝ դաշնակցականները։ Եւ սակայն ճշմարտութիւնն այն է, որ զէյթունցին ուրիշ բան չէ և չուզեր ըլլալ, եթէ ոչ ամէն բանէ առաջ զէյթունցի։ Ահա իր կուսակցութիւնը։ Մնացածը սուտ և փուճ բաներ են՝ աւելի քան իրականութիւնը՝ այդպէս հռչակողներուն րէկլամի տեղ ծառայելու համար։ Ապա թէ ոչ՝ ծիծաղելիութիւն մը չէ զէյթունցին յեղափոխական ընելու անոնց պարծենցումը։ Այն օր—շատ տարիներ առաջ—երբ զէյթունցին կռիւ կը մղէր իր դիրքին պահպանութեան համար, ուր էին մեր երկնառաք ազատարարները։

Եւ սակայն զէյթունցին ճարպիկ է, որքան քաջ։ Ասոնք կրցած են ցարդ ազգին և կուսակցութեանց տրամադրութիւնը շահագործել, երբ կուսակցականներն ալ անոնց անունը լոկ շահագործած են րէկլամի համար։ Այո, ապա թէ ոչ՝ ազգային հեղինակութիւնը չճանչցող, սրբութիւնները ոտքի տակ առնող մեր կուսակցական գաղափարները բնաւ տեղ և հող չէին կրնար գտնել Ուլնիոյ մաքուր և կոյս լեռանց մէջ, որուն օդը մահացու է պարզապէս այդ տեսակ գաղափարներու. և որ բնականաբար չի կրնար յարմարիլ տեղացոց խելքին, հայրենի սովորութեանց, աւանդութեանց և եկեղեցիին սրտագին փարած այդ ափ մը՝ թէև դեռ տգէտ, բայց անկեղծ ժողովրդեան։

Զէյթունցին պէտք չունի քաջութեան քարոզներու, ինքզինքն անոր վարպետ ծախողներուն իրապէս վարպետն ըլլալով։ Ան ամէն բանէ աւելի պէտք ունի կրթութեան և պէտք է իր տնտեսական դժուարին պայմաններուն կանոնաւորումովը իր խեղճ վիճակին բարելաւման։

Եւ սակայն տարօրինակ ժողովուրդ են սա ուլնիացիք։ Ազգը շատ գգուած է զիրենք։ Անոնք «երես առած զաւակներն» են հալածուած հայութեան, որ հին, այդ լեռանց մէջ ծայրը գտած է իր վաղեմի թարշուած ազատասիրութեան զգացումին հարազատ արտայայտութիւնը, որ այլուր բռնապետութիւնը չարաչար խեղդամահ ըրած է իր սիրելեաց ջերմ և թանկագին արեան մէջ։

Անուամենայնիւ, երբ մէկը մօտէն կը դիտէ զիրենք, կը տեսնէ անոնց ալ իւրայատուկ մասնաւոր և ընդհանուր թերութիւնները, անոնց ալ պակաս կողմերը—ոչ սակաւ—կարծէք տեսակ մը յուսավրիպումի կը հանդիպիս։

Ուլնիացին հեռուէն լսելու է և երևակայութեամբը, միտքին վառ զգացումներովը տեսնելու է։

Անուամենայնիւ լեռնական այդ ափ մը ժողովուրդը արժանի է ազգին գուրգուրանքին և հաշուած հոգածութեան։ Այն օր, որ ազգին ջանքերուն տակ Ուլնիոյ բարոյական և մտաւորական զարգացումն ալ հաւասարի իր բնական քաջութեան, անոնք կըլլան հաւաստաբար մեր կատարելագոյն հայատիպերը։

Զէյթունի կրթական գործը երկար ատենէ ի վեր ազգը ստանձնած է՝ Հին Միացեալ Ընկերութիւնքը, ապա պատրիարքարանը և այժմ ալ նոր Միացեալ Ընկերութիւնքն ու Ազգանուէր Հայուհեացը։

Եւ իրաւունք է ակնկալել, որ զէյթունցին իր վրայ թափուած այդ ջանքերուն ամուլ և ապերախտ չմնայ։ Եւ արդէն կրթական այս աշխատութեանց իբր արդիւնք հոն կայ այժմ բաւական կիրթ աչքաբաց երիտասարդութիւն մը, որով պիտի կրնար պարծիլ ոևէ կարևոր գաւառ մը։

Վերջին ծայր բարեպաշտ է ժողովուրդը, ամուր մը կապուած իր հայրենի եկեղեցիին և նախանձախնդիր՝ ազգային աւանդութեանց և սովորութեանց։

Ժողովրդեան մեծագոյն մասը հայ եկեղեցւոյ զաւակ են։ Հազիւ 50 տուն չափ բողոքական և 35 տուն չափ կաթոլիկ կայ։ Իսկ գիւղերու մէջ գրեթէ բնաւ չկան անոնցմէ։

Հաջինի, Մարաշի, Քէսաբի և Սուէյդիոյ հայերուն նման, ասոնք ևս ունին իրենց ուրոյն գաւառաբարբառը, որ լեռնաբնակ ժողովրդոց յատուկ հնչումով մը՝ դրսեցիներու շատ ալ հասկնալի չէ և աղաւաղուած։ Սակայն բազմաթիւ բառեր հարազատօրէն կը մատնեն իրենց նախավայրերուն լեզուն—արարատեան և Վասպուրականի բարբառը։ Տեղացիք կըսեն, որ իրենց նախնիք հոն գաղթած է Անիի և շրջապատի գաւառներէն։ Եւ արդարև՝ քաղքին առաջ տարածուած ձորը «Անի ձոր» կը կոչուի։ Կան նաև տեղեր, որոնք կը կոչուին «Խանաձոր», «Արգինա» և այլն։

Աւազակային բնաւորութիւն մը, հինէն մնացած, բոլորովին վերջացած չէ դեռ, և ատոր համար ալ երբեմն մինչև իսկ իրարու հանդէպ մարդասպանութիւններ տեղի կունենան։ Երևոյթ մը՝ վերջին ծայր տգեղ՝ իրենց փառաւոր անունին։

Չեն վերջացած նոյնպէս իրենց թաղային հակառակութիւնք, թէև նուազած՝ նոր երիտասարդութեան համակրելի ջանքերուն ներքև։

Չորս գլխաւոր թաղեր կան. Վերին-թաղ (ս. Լուսաւորիչ), Միջին-թաղ (ս. Աստուածածին), Պօզ-բայիր (ս. Յովհաննէս) և Հարկալար (ս. Սարգիս)։ Ատենին այս թաղեցիներու յարաբերութիւնք վերջին ծայր լարուած էին, արիւնահեղութեան աստիճանին, թշնամութիւն մը, որ արտաքին յարձակումները միայն կրնային ատեն մը համար անհետացնել։

Նշանաւոր ընտանիքներ կամ իշխաններ էին այս բաժանմանց գլխաւորները, և անոնց իւրաքանչիւրին ուժը կը չափուէր զիրենք յատկանշող բառով մը—այսինչ աղան այսքան չախմախ ունի։ «Չախմախ»՝ հին կայծքարով հրացանց անունն էր, և այսքան «չախմախ» ունենալը՝ կը նշանակէր ի հարկին այսքան կռուող զինուոր ունենալ։ Այս տեսակէտէն նշանաւոր էր վերին-թաղցի Ենի-Դիւնեա ընտանիքը, պատմական հռչակաւոր Պապիկ փաշային տունը։

---

*) Տես «Մշակ» № 156.

մտաւոր կեանքը եռում է իր բոլոր կողմերով, մտքերի ու տարբեր հայեացքների բախումն է տեղի ունենում, այս բոլորի հանդէպ հայ ուսուցչութեան մեծ մասը, մասնաւորապէս գիւղական ուսուցիչները չէզոք ու անշարժ են մնում։ Նրանք չը գիտեն թերևս, թէ ի՛նչպիսի յեղափոխութիւններ են կատարվում մտաւոր աշխարհում, ի՛նչ նորանոր ուղղութիւններ, ի՛նչպիսի նոր հայեացքներ են պայքարում միմեանց դէմ և յաղթանակն ո՛ր մէկի կողմն է մնում։

Մեզանում գիւղական հայ ուսուցիչը ըստիպված է եղել և է այս կամ այն կեանքից կտրված գաւառի խուլ անկիւններից մէկում, ամբողջ տարին անջատված դրսի աշխարհից, լուռ մենութեան մէջ ապրել, այն էլ հայկական այս կամ այն դպրոցի տուած պաշարով, դպրոցի, որը զուրկ է եղել հիմնական ծրագրից, որոշ սիստեմից։

Այս աչքի զարնվող երևոյթի մէջ պէտք է որոնել բուն պատճառը այն բանի, որ մանկավարժական գործը մեզանում իր ցանկալի և անհրաժեշտ առաջադիմութիւնը չէ արել և չէ անում։ Եւ այսպէս, չը նայելով որ մեր մէջ լոյս են տեսնում մի շարք պարբերական հրատարակութիւններ, այնուամենայնիւ ընթերցողը այդ թերթերում հրապարակ եկած մանկավարժական հարցերի վերաբերմամբ չէ հանդիպում որևէ լուրջ պայքարի, կարծիքների փոխանակութեան և կամ մանուկների՝ դպրոցական աշխարհից որևէ նորութեան։ Մարդ զարմանում է այս լռութեան և անխիտ անտարբերութեան վրա։ Հարց է ծագում. արդեօք դաստիարակութեան գործին նուիրված ուսուցիչների մէջ չը՞ լինում մէկը, որ այս կամ այն թէօրին կամ կարծիքը, եղած հոգեբանական եզրակացութիւնները անհամապատասխան գտնի հայ մանկական աշխարհում, հայ դպրոցում և կամ առաւելութիւն տայ այս կամ այն մեթօդին կամ թէ ուղղութեան։

Ներկայիս մանկավարժութիւնը, որ գրեթէ ամբողջովին հիմնված է հոգեբանական և պատալօգիական տուեալների վրա, արդեօք մեր հայ մանկավարժները այդ հողի վրա մանկական աշխարհում որոշ աչքի ընկնող երևոյթներ չե՞ն նկատում։ Եւ այս սառնութիւնն ու անտարբերութիւնը տեսնվում է մի իրականութեան մէջ, ուր դեռ ամեն ինչ գտնվում է ոչ հասուն վիճակում, ուր դպրոցական գործը երերուն ու անհաստատ կերպարանք ունի և կանոնաւոր ու հաստատուն ոչինչ չը կայ։

Այս լռութիւնը թոյլ է տալիս եզրակացնելու, որ կամ մեր ուսուցչութեան մեծագոյն մասը ներկայիս մանկավարժական աշխարհում կիրառվող սիստեմներին կամ հայեացքներին անտեղեակ է, կամ զբաղվելով մանուկների դաստիարակութեամբ՝ հնարաւորութիւն, միջոց չունի ամբողջովին նուիրվելու գործին ու սրտանց չէ նուիրված մատաղ սերնդի դաստիարակութեան, չի թափանցում, չի հետախուզում այն և եղածը դրա համար համապատասխան է համարում իր խնամքին յանձնված մանուկների նկատմամբ։ Սակայն սրանցից ո՛րն էլ որ լինելու լինի, իրականութիւնն այն է, դժբաղդաբար, որ հայ դպրոցական կեանքում չէ նկատվում այն մեծ հետաքրքրութիւնը, այն մտաւոր կեանքի եռումն, որն իր խոշոր դերն ունի կատարելու մանկավարժութեան առաջ մղելու, զարգացնելու գործի մէջ։

Վերջին ժամանակներս մարդկային միտքը խոշոր թռիչքներ է կատարում անընդհատ։ Մարդիկ ամեն կերպ աշխատում են հոգևոր կեանքին ցանկալի լրացումն տալ։ Միմեանց ետևից ծնվում են մարդիկ իրանց առանձին մանկավարժական ուսմունքներով, մարգարէական ձայնով յայտարարում այն, բայց նորից հիասթափվում, նորից որոնումների մէջ մտնում։

Մտածվում է գտնել այնպիսի մի ուղղութիւն, այնպիսի մի սիստեմ, որը կարողանար բաւարարութիւն տալ թէ անհատի և թէ սօցիալական կեանքի հրամայողական պահանջներին։ Եւ այս կատարվում է այնպիսի երկիրներում, որտեղ մանկավարժական գործը դրված է որոշ չափով ցանկալի հիմքերի վրա։ Սակայն մեր իրականութեան մէջ կարծես թէ պահանջ չը կայ և ամեն ինչ կատարեալ է. կարծես լուրջ վերանորոգութեան կարիք չեն զգում հայկական դպրոցները, դպրոցներ, ուր ոչ թէ դաստիարակվում, այլ ընդհակառակը մաշվում, թուլանում է մատաղ սերունդը թէ մտաւորապէս և թէ ֆիզիքապէս։ Սակայն կանգ առնենք այժմ մեր ուսուցչութեան մէջ մեծ նշանակութիւն ունեցող այն հիմքերի վրա, որոնք առաջ են բերում այսպիսի ոչ ցանկալի և նպատակին վնասող հետևանքներ։

Ինչպէս վերև շեշտեցի, հայ ուսուցիչը, մասնաւորապէս գիւղական ուսուցիչը, գտնըվում է մի շարք աննպաստ, տնտեսականից խիստ նեղ վիճակի մէջ։ Նա, նախ չի վարձատրվում այնպէս, ինչպէս այդ պահանջում են նրա կարիքները։ Ստանալով 400—500 ր., այդ ստացած փողով—եթէ նրանք ունեն ընտանիք էլ — կարողանում են շատ - շատ իրանց ընտանեկան պետքերը հոգալ և տարվայ ընթացքում եղած սեփական կարիքներին մի կերպ գոհացումն տալ, որից յետոյ տարվայ վերջը մնում է, այն էլ հազուագիւտ դէպքերում, մի քանի տասնեակ րուբլի, որով նա ո՛չ կարող է գնալ որևէ տեղ թարմանալու, ոչ ճանապարհորդելու և ոչ էլ անհրաժեշտ գրականութիւն ստանալու համար պէտք եղած փողն ունենալ։ Ստիպված՝ նա մնում է այն տեղը, նոյն դրութեան մէջ, լինի ամբողջ տարին քայքայված թէ յոգնած, այդ միևնոյն է։ Եւ ահա այսպէս գլորվում են տարիները իրար ետևից, իսկ հայ ուսուցիչն աստանդական, այս կամ այն հեռաւոր, հաղորդակցութիւնից կտրված վայրում անց է կացնում իր օրերը։

Իսկ ի՞նչ է լինում սրա հետևանքը. այն՝ որ նա չի կարողանում իրա համար կենսական նշանակութիւն ունեցող հարկաւոր գրականութիւնն ունենալ, մի բան՝ առանց որի ուսուցիչը չի կարող արդիւնաւոր լինել, այնպէս՝ ինչպէս բոյսն առանց ջրի։ Մարդկային հոգին երբէք միապաղաղ դրութիւն, տարտամութիւն չի սիրում. այդ նոյնիսկ հոգեբանութեան հակառակ մի երևոյթ է։ Մարդս անհանգիստ միշտ ձգտում է առաջ. նա որոնումների մէջ է, սուզվել է ցանկանում, նոր հօրիզոններ փնտռում համեմատաբար աւելի պայծառ, աւելի զուարթ. կեանքի մէջ իւրաքանչիւր մի նորութիւն գրաւում, հրապուրում է նրան և պէտք է որ բաւարարութիւն տայ հոգու այդ պահանջներին։ Այսպէս՝ մարդ ցանկանում է հոգեկան կեանքով եա ապրել, իսկ հոգևոր կեանքով ապրելու համար հարկաւոր է ուսուցչի համար նիւթական ապահով վիճակ, հարկաւոր է նրա անհրաժեշտ պահանջների բաւարարումն։

Արդ՝ եթէ մի ուսուցիչ ստիպված լինի որևէ կերպ—այդ դժնդակ պայմանների ազդեցութեան տակ թէ ուրիշ արգելառիթ հանգամանքների շնորհիւ—իր հոգու մէջ ծագող ամեն նորութեան, ամեն մի ձգտման ու հետաքրքրութեան վրա բռնանալ, ճնշումն գործ դնել և ապրել կղզիացած ու մեկուսացած, այդպիսին, մեզ թւում է, սիստեմատիկ հոգեսպանութիւն է կատարում իր վերաբերմամբ։ Մեկուսացած կեանքը, կտրված ապրելը բթացնում է մարդու ընդունակութիւնները, աղճատում միտքը։ Ի՞նչ է նշանակում տարիներ շարունակ, առանձնութեան մէջ, միայն չափած ու ձևած ֆօրմուլաներ արտասանել, միևնոյն բանը հարիւրաւոր անգամ կրկնել, ասածը միայն լսել և դրանով բաւականանալ։ Եթէ մի հասարակութիւն նման անելանելի պայմաններ է ստեղծում իր ուսուցիչ-դաստիարակչի համար—ուսուցչի, որին յանձնված է մատաղ սերնդի դաստիարակութեան մեծ գործը, որի ոգևորութիւնից է կախված իր յոյսերի իրականացումն, որի առաջնորդութեամբ նա պիտի վայելի այն՝ ինչ որ ցանկալի է իրան ու սիրելի—հասարակութիւնը այդպիսի դէպքում անարդարութիւն է կատարում թէ մի մեծ գործի և թէ ուսուցչի անձնաւորութեան նկատմամբ. այդ նշանակում է, թէ նա սրտով չէ փարում այն գործին, որի մէջ պիտի տեսնի հասարակական կեանքի լուսաւորութիւնն ու բարելաւումը, նրա ընկած վիճակի բարձրանալն ու ազնւանալը։

Շուշի Մանկավարժ

(Վերջը միւս անգամ)

Պահքի համար առենին շատ բծախնդիր էին։ Թէև գիւղերը այս մասին շատ խիստ են դեռ, բայց Զէյթունի մէջ այնքան չէ։

Ունիթացին հաճութեամբ կընէ գողութիւն, յափշտակութիւն և նոյն իսկ մարդասպանութիւն, բայց իր պահքը չի լուծեր։

Կառավարութիւնը երկար աշխատած է մէջերնին մտնել և զիրենք անդամատել։ Սակայն իրարու մէջ անմիաբան այդ զէյթունցիք միշտ ալ ընդդիմացած և ի դերև հանած են այդ մեքենայութիւնները։

1895-էն առաջ 40—50 տուն թուրքեր ալ կային հոն, բոլորն ալ մինչև այժմ հայախօս՝ Զէյթունի բարբառով։ Սակայն 95-ի դէպքերէն ետք՝ թէև պահպանւեցան հայերէն, սակայն թողին քաղաքը և հեռացան այլուր։

Զօրանոցին հին տեղը, որ ճիշդ քաղքին քովիկը պիտի ըլլար, Պօղ-բայիրի կորիճ թաղին դէմը, այրուած է եղեր, հազիւ սկսուած, գիշերով մը երկու խենթերու ձեռամբ։ Կառավարութիւնը խորհած է. եթէ խենթերը գիշերի մը մէջ այդքան ըրին, ինչեր չպիտի ընէին խելօքները ցերեկով. և գացած հեռուն, քաղքէն $1^1/_2$ կիլոմէտր հեռուն, շինած է զօրանոց-բերդը, ինչ որ արգելք մը չեղաւ սակայն, որ 95-ին ան ալ գրաւուէր։

Անցեալ տարիէն սկսեալ զօրքերը քիչցուեցան, որ պարզապէս զանոնք ահաբեկելու համար կը պահուէին հոն։ Սահմանադրական կառավարութիւնը կը թուի թէ հակցաւ վերջապէս, որ զէյթունցիք ալ եթէ հանգիստ ձգուէին, նոյնքան խաղաղ հպատակներ էին, որքան ուրիշ տեղացիք։

Մեծկակ թնդանօթներն ևս, որոնց փոխադրութիւնը մեծածախս պիտի ըլլար—համիդեան յիշատակ—աղացուելով կորուեցան։

Այժմ ալբանացի կայմակամ մը ունին, լուսամիտ և խելացի, որու վրայ կը գովաբանեն տեղացիք, ինչ որ ինքնին հերքում մը կըլլայ զէյթունցւոց հակակառավարական տարաձայնութեանց։ Ունին և առաջնորդ մը, երիտասարդ երուսաղէմական մը, Վաղարշակ ծ. վարդապետ, որ կրցած է յարմարիլ տեղացւոց և օգտակար հանդիսանալ՝ հեռու յոռի և չլատիչ ազդեցութիւններէ՝ իր լեռնական հօտին։

Հիմա որ քիչ շատ խաղաղութեան շրջան մը բացուած է Թիւրքիոյ համար—ինչ որ կը մաղթենք ի սրտէ, տեւական ըլլայ, այնքան որ թերահաւատ ենք դժբաղդաբար—յուսալի է, որ ունիթացին այլ ևս տխուր և ակամայ պէտք պիտի չունենայ՝ սուրի և գնդակի, իր քաջութեան արժանիքը ցուցադրելու։ Եւ պիտի հասնի, վերջապէս, այդ քաջութեան համահաւասար միտքի կոլովով մը և յառաջդիմութեամբ փայլել ուրիշ յառկութեանց մէջ ալ. ինչ որ միայն կրնան՝ խաղաղ և ազատ պետութեան մը ներքև անշուշտ՝ իր լեռնաբնակ տաժանելի կեանքը, ըստ կարի, բարելաւել։

Մ-Նա

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

III

Ամեն անգամ, երբ մի նոր լոյս տեսած հայերէն գիրք եմ տեսնում, միշտ մտքումս ասում եմ.

«Խեղճ գրող, աշխատել ես, չարչարվել, տքնել, գուցէ նոյն իսկ շատ անքուն գիշերներ անցկացրել և մի գիրք գրել։ Յետոյ գրպանից փող ես ծախսել, գրուածքդ տպագրել տուել, յոյս ունենալով որ եթէ չաշխատես, գոնէ արած ծախսերդ դուրս կը բերես։ Եւ ի՞նչ։ Քո գրքերդ թափված են մնալու գրավաճառանոցներում տարիներով, ցեցի ու մկների կերակուր են դառնալու, իսկ դու այդ ժամանակ գրպանիդ վերջին կօպէկները ծախսած, քաղցած փորով, դռնէ-դուռն ընկած՝ փողոցներն ես չափչփելու։ Չէ՞ որ այս է հայ գրողի վիճակը։ Խեղճ գրող...»։

Այս նոյն միտքը անցաւ իմ գլխովս, երբ մի օր գրասեղանիս վրա տեսայ մի նոր գրքոյկ։

Մի փոքրիկ, վտիտ տետրակ։

Ձեռքս առայ գրքոյկը, այս կողմը նայեցի, այն կողմը նայեցի և սկսեցի կարդալ։

Կարդացի մէկ անգամ, կարդացի երկրորդ անգամ, կարդացի երրորդ անգամ, յետոյ ծալեցի գրքոյկը, մի կողմ դրեցի և սկսեցի մտածել։

Երկար մտածեցի, չափեցի, ձևեցի, նորից կարդացի, նորից մտածեցի և այս անգամ մտքովս արդէն մի ուրիշ միտք անցաւ։ «Խեղճ հայ ընթերցող։ Խեղճ, որ ստիպված պիտի լինես մի քանի ժամեր վատնելու, որպէսզի կարդաս այդպիսի մի գրքոյկ, կարդաս մի քանի անգամ և առանց մի բան հասկանալու, ափսոսալով տուածդ կօպէկները, ափսոսալով կորցրած ժամանակդ, ծալես և մի կողմ դնես նրան»։

Զարմանալի ազգ ենք մենք։

Մեզ մօտ փոքր ի շատէ գրագէտ մարդ չես գտնի, որ իրան գրող կամ բանաստեղծ չերևակայէ և պարապ ժամանակները պատմուածքներ ու բանաստեղծութիւններ չը թխէ։

Մի ժամանակ, գոնէ, ցենզուրական խիստ պայմանների շնորհիւ այդ նորաթուխ գրողները շատ քիչ էին լոյս աշխարհ դուրս գալիս և իրանց գրուածքները միայն ծանօթ ու բարեկամների շրջանում էին կարդում։

Իսկ այժմ, երբ այդ խիստ պայմանները այլևս չը կան, երբ բաւական է մի քանի րուբլի փող ունենալ, որպէսզի կարելի լինի մի գրքոյկ հրատարակել,—մեր «գրողները» միմեանց ետևից հեղեղում են գրական հրապարակը իրանց մտքի արգիւնքներով։

Եւ ամեն մի տեղից վեր կացողը գրող ու բանաստեղծ է ուզում հռչակվել, գրքոյկներ է տպագրում և անմահացնում իր անունը ապագայ սերնդի համար։

Վ. Թումանեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Քաղ. վարչ. նոր անդամների հաստատութիւնը

Նոր-Բայազէտ, 18 յուլիսի

«Մշակի» № 100-ում գրել էի, որ երկու անգամ բեկանումից յետոյ մեզանում նորից ընտրվեցին քաղ. վարչութեան անդամներ, որոնց անուանացուցակը ներկայացված էր Երևանի նահանգապետին ի հաստատութիւն։ Այսօր թուղթ ստացվելով Երևանի նահանգական դիւանատնից՝ կարող եմ յայտնել, որ վերջապէս հաստատվեցին մեր քաղաքի նորընտիր լիազօրները իրանց պաշտօնում՝ մէկի փոփոխութեամբ միայն, այն է՝ լիազօրի պաշտօնով ընտրված Կ. Տէր-Իսահակեանց (այժմեան ոստիկանի օգնականը) դուրս հանվելով իսկական անդամների ցանկից համարվել է անձնափոխանորդ և, ընդհակառակն, անձնափոխանորդ հաշված Ա. Մարբէյեանց հաստատվել է իսկական լիազօրի պաշտօնում՝ Տէր-Իսահակեանի տեղ։ Այստեղ վարչութեան նորընտիր անդամների անուանացուցակը բերելու չեմ. ով որ հետաքրքրվում է այդ մասին, կարող է նորից աչքի անցնել «Մշակի» № 100-երրորդը, ուր մի առ մի գրած եմ նրանց անունները։ Իսկ առ այժմ ի սրտէ շնորհաւորելով նորընտիր անդամներին իրանց պաշտօնների վերաբերմամբ՝ կասեմ, որ նրանք պարտաւոր են իրանց անաչառ, խելացի և աշխոյժ գործունէութեամբ ցրել այն կարծիքները, որ ունեն մեր քաղաքացիք նորընտիր լիազօրներից շատերի վերաբերմամբ։

Շուտով անշուշտ տեղի կունենայ առաջին ժողովը ընտրութիւնների վերահսկիչ նախագահ ընտրելու առիթով, որի հաստատվելուց յետոյ մօտ ապագայում տեղի կունենայ քաղ. աւագի և սրա օգնականի ընտրութիւնը։ Առ այժմ աւագի պաշտօնի համար թեկնածուներ են համարվում Գ. Արծրունի և Ստ. Բաղրիկեանց։

Մոռացայ վերևում գրել. թէպէտ այս ընտրութեան առիթով նոյնպէս բողոքներ էին տրվել, որպէսզի անվաւեր ճանաչվեր այս ընտրութիւնն էլ, բայց երրորդ ընտրութիւն լինելով յարգվել է ժողովրդական ընտրողական իրաւունքը և հաստատվել ընտրութիւնը։

Փարս

Գրադարանի հարցը

Նուշինակ, 17 յուլիսի

Շուշու թեմ. դպրոցի աշակերտ համագիւղացի Սուրէն Տէր-Գրիգորեանի նախաձեռնութեամբ բացվելիք գրադարանի համար հաւաքված է աւելի քան 200 կտոր գիրք։

Զարմանալի բան. «Մշակի» էջերում լոյս տեսնող նամակները արձագանք են գտնում հեռաւոր հիւսիսում, իսկ մեր քթի տակ ապրող բազուարձակ հայրենակիցներ կարծես ընկմված են խորունկ քնի մէջ։ Նրանք գիտեն լաւ-լաւ խօսել, իսկ գործել՝ բոլորովին ոչ։ Եւ սակայն մեզ գործ է հարկաւոր։

Նիկ. Յարութիւնեան

Հասարակական մեռած կեանք

Կրասնովոդսկ, 16 յուլիսի

Այս տարի շատ սառն անտարբերութիւն և անսպասելի յետադիմութիւն է նկատվում տեղիս հայ երիտասարդութեան մէջ։ Չը կայ ոչ մի շրջան։ Զափազանց տխուր է մեր կեանքը։ Բոլորն էլ իրանց կրսատեբեր զուարճութիւններով տարված լինելով մեռած դրութիւն են ստեղծել։ Առաջադիմական ոչ մի շարժում։ Ընթերցանութեան համար խօսեն անգամ աւելորդ է։

Տեղիս «Իզմիրլեան» ընթերցարանը, որ կից է ծխ. դպրոցին, բացի ուսուցչ. կազմից ոչ ոք չէր բարեհաճում ներս մտնել թէկուզ ամիսների ընթացքում գէթ մի անգամ, չը նայած որ գրադ.-ընթերցարանում կարելի է ձրիօք բերել գրքեր ընթերցանութեան համար և լրագիրներ էլ ստացվում են շարունակ։

Այս տարի ներկայացումներ էլ շատ քիչ ունեցանք, որովհետև երիտասարդութիւնն ամբողջ ժամանակը տարված էր լօտօյով և թղթախաղով, ինչպէս և այլ կասկածելի զուարճութիւններով կամ արբեցողութեամբ, իսկ ուսուցչ. կազմը իր դպրոցական գործերից դուրս ուրիշ բան չէր ուզում ճանաչել և սպասում էր դերասանական խմբի գալստեան։

Զ.-են

Անբաւարար բերք

Ծօճկան (Բորչ. գաւ.), 17 յուլիսի

Մեզանում խոտի հունձը վերջացաւ, որը համեմատաբար անցեալ տարիների՝ աւելի լաւ էր։ Սկսվել է հացաբոյսերի հունձը, չը նայած որ հացաբոյսերը մեզանում դեռ ևս հասունացած դրութեան մէջ չեն։ Բայց դրան նայողն ո՞վ է։ Չէ՞ որ բաւական է, որքան գիւղացին դռնէ դուռ հաց մուրայ իր սոված ընտանիքը պահելու՝ իր կեանքը մաշելով։

Մեր գիւղացոց տեղը կալուածատիրական է. առանց նախօրօք թոյլտուութիւն ստանալու կառավարչից՝ գիւղացին իրաւունք չունի մի քայլ անգամ անելու՝ հացաբերքի վերաբերմամբ։ Չը նայած դրան՝ այս դաժան տարին, որ մեզանում ոչ ոտքի վրա կենդանի մարդ և ոչ էլ տաւար ու ոչխար թողեց, այժմս ստիպում է գիւղացուն առանց թոյլտւութեան հնձել ու կալսել հացահատիկը։ Հնձում են կանաչ, առանց սպասելու որ հասնի ցորենը։ Ահա քանի օր է, ինչ մեզանում գարի, ցորեն են կալսում և չեն ստանում այն, ինչ որ սպասում էին կամ յոյս ունէին։

Այս տարվայ հացը կրկին պակաս է. գիւղացին հազիւ հաց մի քանի ամիս ազատ շունչ կը քաշէ ու կը հանգստանայ, որից յետոյ կրկին նոյն հոգսերը, նոյն սովի ճանկն է ընկնելու։

Սաստիկ ցրտերից այգիները չորացել են, այնպէս որ այս տարի ևս մեր գիւղացին զուրկ է առատ տեսակ-տեսակ մրգեղէնից։

Կայծօն Շէքեան

Մի պատանի ձիու տակ ընկած

Դիլիջան, 18 յուլիսի

Յուլիսի 17-ին, Վարդավառի տօնի առիթով, համարեա բոլոր ամառանոցաւորները և գիւղացիները գնացել էին Դիլիջանից 4 վերստ հեռու «Պռեճուր Գիլի» կոչված ուխտատեղին, ուր կան մի քանի խաչքարեր, որոնք, ինչպէս աւանդւում, դուրս են եկել հողի տակից։

Գիւղացիներից մէկն ինձ պատմեց, որ առաջ այդտեղ է եղել Հին-Դիլիջանը, ունեցել է եկեղեցի և երևի այդ խաչերը նրա աւերակներից են դուրս բերվել, սակայն աւերակների ոչ մի հետք չը տեսայ։

Մինչև ժամը 4-ը բոլորն էլ լաւ քէֆի մէջ էին. մօտ 8 դհօլ-զուռնա կար, պար, երգ երաժշտութիւն իրար հետ էր խառնվել։

Յանկարծ լսվեց մի սուր ճչոց, և ժողովուրդը հաւաքվեց։ Մի քանի ուսանողներ իրանց ձիերն արագ քշելու ժամանակ, նրանցից մէկը, չը կարողանալով ձին զսպել, ուղիղ եկաւ մի դիմացողի վրա և տակովն արաւ։ Տղան արիւնաթաթախ վայր ընկաւ։ Արիւնը քիթ ու բերնից շատրուանի նման դուրս էր ցայտում։ Բարեբաղդաբար այդտեղ էր բժ. Մելիք-Նուբարեանը, Շնորհիւ վերջինիս ջանքերի՝ արիւնը մի կերպ կապեցին և ուշքի բերին պատանուն, որին անյուսալի դրութեան մէջ կառք դնելով տուն տարան։ Դրանից յետոյ բոլորն էլ խառնվեցին և ամեն բան իրար անցաւ։

Լէւոմա

Լերմոնտովի 70-ամեայ մահվան տարելիցը

Պեատիգօրսկ, 16 յուլիսի

1841 թ. յուլիսի 15-ին Մաշուկ լեռան հարաւ-արևմտեան թեքութեան նայող լանջին, պատւի պաշտպանութեան անյաղթելի գիտակցութեամբ մենամարտութեան բռնվելով, Լերմոնտով ընկաւ վերջին հառաչը տալով իր սիրած լեռներին։

70 տարին անցաւ։ Այսօր նրա զուրգուրած գաղափարների ըմբռնող, սիրող հասարակութիւնը գնահատելով նրա տաղանդը, ոգևորվելով իր հայրենիքի փառք Լերմոնտովով՝ ցանկութիւն ունէր մենամարտութեան տեղում հոգեհանգիստ կատարել։ Այդ՝ արգելքի հանդիպեց, ուստի քաղաքային և ջրերի վարչութեանց նախաձեռնութեամբ հոգեհանգիստներ կատարվեցին մայր եկեղեցում և գերեզմանատանը դամբարանի վրա։

Հոգեհանգիստների կատարմանը հասարակութիւնը բացակայում էր. գերեզմանատանը ներկայ էին ո՛չ աւել քան 25—30, եկեղեցում՝ 10—15 հոգի։

Կովկասեան լեռնային ընկերութեան կողմից մենամարտութեան տեղին «այց» էր նշանակված։ Այդ նշանակված ժամին 1000 հոգուց աւելի մի բազմութիւն, լսելեաց շրջապատած յուշարձանը, լսում է լեռնային ընկերութեան կողմից արտասանվող ճառին։ Ճառը վերջացնելով խօսողը թանգագին պսակ դրեց պատուանդանի վրա։ Նրանից յետոյ խօսեց մի ուրիշը՝ Եսենտուկիի ուսանողութեան սանատօրիայի կողմից։ Յետոյ ցրվեցին բոլորը իրանց մէջ կենդանացած Լերմոնտովի հետ կապվելով։ Այդ օրը ուխտատեղի էր և «գրոտ Լերմոնտովի» փոքրիկ քարայրիկը։

Մարգ.

Գր.-ընթերցարան պիտի ունենա՞նք վերջապէս

Ասխաբադ, 16 յուլիսի

Անհասարակ ընդհանուր սովորոյթ է դարձել միշտ մեղադրել միմիայն հասարակութեան, ժողովրդին, որ նա դեռ ևս անգիտակից է, որ նա ընդառաջ չէ գնում բարի ցանկութիւններին. և այդ մեղադրանքները իւրաքանչիւր ոք անխնայ թափում է այն հասարակութեան հասցէին, որը գուցէ այդ չափով էլ յանցաւոր չէ յիշեալ դէպքերում։ Մեր կարծիքով, աւելի շուտ յանցաւոր են «գիտակից» կոչված այն անհատները, որոնք սիրում են փքուն խօսքեր արտասանել խուռն բազմութեան մէջ, երևան գալ ունայն փառասիրութեամբ, մեծ-մեծ խոստումներ անել, վաստակել ժողովականների քուէները և այնուհետև հանգիստ դրօմնել, մոռացութեան տալով այն գեղեցիկ ֆրազները, որ դեռ երէկ նրանք կրկնում էին իրանց ընտրող ժողովականների առաջ, մոռանալով միաժամանակ այն սեպուհ պարտականութիւնները, որ յանձն առան նրանք հրապարակային խոստումներով։

Այսպէս, օրինակ, երկար ժամանակ է, ինչ ընտրված է մի յանձնաժողով, որի վրա պարտք է դրված հանգուցեալ Վեհափառ Իզմիրլեանի անունով մի գրադարան-ընթերցարան բանալ Ասխաբադում։ Ի հարկէ հէնց գործի սկզբից եղան մարդիկ, որոնք թերահաւատութեամբ և մինչև իսկ ծաղրանքով վերաբերվեցին դէպի այդ կրթիչ ձեռնարկութիւնը։

Սակայն պէտք է խոստովանել, որ հասարակութեան անդամներից շատ-շատերը ընդառաջ գնացին այդ գեղեցիկ մտադրութեան և տուին իրանց լումաները. և, ինչպէս լսում ենք, այդ նպատակով գոյութիւն ունի 600 ր. մի համեստ գումար, որով արդէն կարելի է գործի ձեռնարկել. և սակայն մեր յարգելի յանձնաժողովի անդամները, որոնք շատ քիչ մասն ունեն կատարված աշխատանքի մէջ, զարմանալի թող չը թւայ, եթէ ասենք, որ բոլորովին չեն էլ մտածում ընթերցարանի մասին, մինչև այժմ ոչ մի քայլ չեն արել և գուցէ մոռացած լինեն իրանց ընտրված լինելու մասին։

Այժմ, երբ մօտաւորապէս 6 ամիս անց հասարակութեան մէջ շշուկներ են տարածվում և դժգոհութիւններ լսվում, մենք պարտք ենք համարում արձանագրել այդ իրաւացի բողոքները և միևնոյն ժամանակ դիմել յանձնաժողովի յարգելի անդամներին, իբրև ընտրողներից մէկը, և հարց տալ, թէ արդեօք ի՞նչ են մտածում նրանք այսքան երկար ժամանակ լուռ մնալով, և ինչ բարոյական իրաւունքներով ի չարն են գործ դնում այն քուէները, որ վստահացան նրանց ժողովականները։

Ժամանակ է, որ յանձնաժողովի անդամները թողնեն իրանց դատապարտելի լռութիւնը և հրապարակօրէն հաշիւ տան ինչպէս հաւաքված փողերի, այնպէս էլ իրանց դիտաւորութիւնների մասին։

Վաչէ

ԳԱՆՁԱԿԻ ԶՈՒԼՀԱԿԱՆՈՑԸ

I

Գետաշէն (Գանձակի գաւ.), 4 յուլիսի

1906 թւին, հայ-թուրքական ընդհարումներից յետոյ, երբ շատերը հայ ընտանիքներից, կորցնելով իրանց ունեցածները, որբանալով՝ աշխատաւոր ձեռքերը կորցնելուց յետոյ, իրանց օրական ապրուստը հայթայթելու ցանկութեամբ ողորմութեան դուռն էին բաղխում, հանգուցեալ կին բժիշկ տիկին Մարգարիտ Օհանեան Մելիք-Բէգլարեանը, տոգորված՝ Ջուլհակութեան, ոստայնանկութեան արհեստը ժողովրդի մէջ տարածելու տենչով, քաղաքից-քաղաք, գիւղից գիւղ անհանգիստ թափառում էր և ամեն տեղ ժողովրդին քարոզում, յորդոր կարդում, հաստատում Ջուլհակութեան արհեստի մեծ նշանակութիւնը հայ կեանքի իրականութեան շրջանում և այդ արհեստի փառաւոր ապագան։

Յիշեալ տիկինը Բագւում գանձակեցի եղբարք Իսահակեանների մօտ Արզումանովի տանը քանի անգամ բազուաբնակ գանձակեցիներից ժողով է կազմել և այդ ժողովներում նրանց քարոզել՝ Գանձակում Ջուլհականոց հիմնելու միտքը, համոզելով Գանձակ քաղաքում Ջուլհականոց բանալ՝ կարօտեալներին դրականապէս օգնութեան ձեռք մեկնելու, և այդպիսով վերջիններիս ողորմութիւն հայցելու չար սովորութիւնից յետ կարգնեցնելու նպատակով։

Պատուելի գանձակեցիները, տաք սրտով արձագանք տալով սրբազան կոչին, ըստ չափու հնարաւորութեան, դառը մոմենտում չեն խնայում թշուառներին օգնութեան գալ։ Հանգուցեալին աջողվում է գանձել մի պատկառելի գումար և Գանձակում իր ցանկացած Ջուլհականոցը հիմնել, գործը յանձնելով մի խումբ ազնիւ և գործին համակրող տիկինների։ Ապա Ջուլհականոցի շուրջը հաւաքվում են անտուն-անտէր որբերը, թշուառների երեխաները մեծ քանակութեամբ, սկսում են աշխատել և հէնց առաջին օրից վարձ ստանալ։

Հանգուցեալը զարմանալի հմտութեամբ, մեծ խնամքով էր ամեն մէկի համար գործ ստեղծում, վաստակելու ասպարէզ բանում և դրանով նրանց դէպի գործ գրաւում... Գանձակի Ջուլհականոցը այն օրից մինչև այժմ նոյնօրինակ աջողութեամբ շարունակվում է շնորհիւ այն յարգելի տիկինների, որոնք, չը խնայելով իրանց թանգագին ժամերը, եռանդով ծառայում են ուշագրաւ, թէև բազմահոգ, բազմաչարչար գործին, յաղթելով մեծամեծ արգելքների...

Հանգուցեալ տիկինը իր նպատակը լայն չափերով գործադրելու, իր յիշատակը աւելի յաւերժացնելու համար, մեծ ջանքեր էր գործադրում գիւղերում Ջուլհականոցներ հիմնելով։ Եւ առաջին տեղը, որ նա ցանկացել էր Ջուլհականոց հաստատել, որի մասին անդադար խօսում-ասում էր, դա Գետաշէն բազմամարդ գիւղն էր։ Դժբաղդաբար, վաղահաս, անգութ մահը խլեց նրան ժողովրդից, զրկելով նրան և իր իղձը, սրտի խորին փափագը իրագործելուց...

Սակայն նրա բարի, մարդասէր ցանկութեանը ազնիւ նախաձեռնողներ գտնվեցին. Գանձակի Ջուլհականոցի վարչութեան նախագահ Նիկ. Ե. Նանասեանցը և գանձապահ տիկ. Ե. Նաթաթեանցը, ցանկանալով Գետաշէնի հասարակութեանը պարզ, հասկանալի կերպով ծանօթացնել Ջուլհակութեան արհեստի հետ, 1909 թ. յունիս ամսին, հասարակութեանը ոչ մի պահանջ չառաջարկելով, անկեղծ ու ջերմ եռանդով կարգադրում են Գանձակի Ջուլհականոցից փոխադրել Գետաշէն գիւղը երեք տորք բոլոր պարագաներով, կարեւոր թելեղէններով, որի համար 20 րուբլով մի բնակարան են վարձում և այնտեղ ուղարկում վարժուհի տիկ. Սօնիային՝ գործը ղեկավարելու։ Գետաշէն գիւղում այդ շինարար գործին մեծ սիրով աջակցում է և տիկ. Ս. Մելիք-Մնացականեանը, որի հսկողութեան տակ է դրվում գործարանը, և նրա միջնորդութեամբ մթերքները Ջուլհականոցին մատակարարվում։

Գործը ամառվայ ամբողջ ամիսներում աջողութեամբ է շարունակվում. գիւղացիք այդ ձեռնարկութեանը մեծ հետաքրքրութեամբ էին վերաբերվում։ Գործուածքները գնում էին մասամբ գիւղացիք, մասամբ օտարները։ Գեղջկուհիները մինչև 12 հոգի արհեստանոցում հերթով աշխատում են, առանց վարձի, ոմանք էլ նայելով իրանց աչքերը վարժեցնում։ Ցաւօք սրտի պէտք է ասել, որ Գանձակի Ջուլհականոցի նիւթական միջոցների սուղալի դրութիւնը առիթ է լինում գործը դադարեցնելուն... Սեպտեմբերին տիկ. Սօնիան, թողնելով գիւղում տորքերը բոլոր պարագաներով, կրկին վերադառնում է Գանձակ՝ այստեղի Ջուլհականոցը աշխատանքի կանգնեցնելու...

Անցեալ 1910 թ. սկզբում՝ տիկիններ Ա. Պետրոսեան-Արզումանեան, Մ. Իսահակեան և ստորև գրողը միասին խորհում ենք Գետաշէն գիւղի Ջուլհականոցը հաստատ հողի վրա հիմնել։ Այս հարցը յարուցանում է տ. Ա. Պետրոսեան-Արզումանեանը։ Սկսում ենք գործել. տիկինների ամուսինները՝ բժ. Ն. Արզումանեանը, Ն. Իսահակեանը և ես՝ Ջուլհականոցին մի-մի տորք ենք խոստանում, վճարելով 50-ական րուբլի։ Կարճ ժամանակից յետոյ տիկ. Պետրոսեան-Արզումանեան յայտնում է մեզ, թէ տորքը արժէ 55 ր. և ոչ 50։ Այսքանը իմանալով, նորից վճարում ենք և 5-ական րուբլի։ Երեք տորքի համար պատրաստ է լինում 165 ր.։ Սրանից յետոյ երեքս միասին դիմում ենք ինժ. Հ. Մելիք-Ռուստամեանին, որ ծառայում է Բիբի-Էյբաթում և ինքը Գանձակ գաւառի Բարսում գիւղից է։ Պարոնը, ծանօթանալով մեր նպատակի հետ, խոստանում է մի տորք և իսկոյն վճարում 55 ր.։ Չորս տորքի համար արդէն ունենում ենք 220 ր.։ Շարունակելով մեր՝ դռներ թակելը, կարճ միջոցում ձեռք ենք բերում 195 ր. ստանալով պ. Հ. Ի. Ն. Մարգարեանից 25 ր., որը խոստանում է գործը աջող ընթացք ստանալու դէպքում եւս օգնել։ Բժ. Մ. Զալիեանից 20 ր., եղբ. Գ. և Մ. Բաղալեաններից 50 ր., Մ. Խ. Աւագեանից 50 ր., Կոստանեանի կօնցերտից 25 ր. և տիկ. Մ. Իսահակեանը տալիս է 25 ր., որի մօտ մնացած է լինում մի ինչ-որ նպատակի համար ժողովված փողերից։ Տորքերի համար վճարած 220 ր. հետ միասին կանի 415 ր.։ Մենք այդ գումարով առանց յետաձգելու գործ ենք սկսում։ Տիկ. Պետրոսեան-Արզումանեանը այս գումարը իր մօտ պահելով բնականապէս ընդունում է գանձապահութիւնը և իր վրա է առնում բոլոր ծախսերը կատարելու հոգացողութիւնը։

Մ. Եպիսկոպոսեան

(Կը շարունակվի)

ԱՆԴՐԿԱՍՊԵԱՆ ԽՈՀԵՐ

I

Թեմական տեսչի անհրաժեշտութիւն

Շատ է խօսվել թերթերում Անդրկասպեան երկրի հայ դպրոցների թեմ. տեսուչների կարեւորութեան մասին։ Այդ խնդիրը հրատապ խնդիր է։

Իրօք՝ շատ թէ քիչ ուշադիր մարդը իսկոյն նկատում է այդ բացը երկրումս։

Համոզված կերպով կարելի է ասել, որ կատարեալ անտէրութեան են մատնված երկրիս կրթական հիմնարկութիւնները, առանց կօնտրօլի, անղեկ, միանգամայն մատնված մոռացութեան։

Այս շրջանի քաղաքներում, առանց բացառութեան, հայ ծխ.-դպրոցների հոգաբարձութիւններն ընտրվում են հարուստ, ունեւոր դասից, հոգ չէ թէ ընտրվածներից շատերը կրթութեան ու մանկավարժութեան մասին այնքան ծանօթութիւն ունեն, որքան ես չինարէնի մասին։

Առ հասարակ՝ մեր շրջանի քաղաքների հայ ուսումնարանների հոգաբարձուները այն կարծիքի են, որ իրանք, ընտրված լինելով միմիայն դպրոցի տնտեսականը հոգալու, գիտութեան օժանի կրթականով կարող են բոլորովին չը հետաքրքրվել։

Բայց այդ հայեացքը, անկասկած, սխալ է մի կրթական հիմնարկութիւն կառավարելու համար։

Տարին գոնէ մի քանի անգամ հոգաբարձուներից նրանք, որոնք գէթ Ե. դասարանի կրթութիւն ունեն, պէտք է այցելեն դասերին և իրանց դիտողութիւնները ներկայացնեն հոգաբարձ. ժողովին։ Բացի այդ՝ նրանք պէտք է հսկեն, որ մանկավարժական բոլոր ձեւերն ու կանոնները ճշդութեամբ գործադրվեն դպրոցական կեանքում, որպէսզի կազմակերպվեն մանկական խաղեր, երեկոյթներ, ներկայացումներ, երգեցիկ խմբեր և այլն... Նոյնպէս և հոգաբարձական մարմնի քիչ-շատ ձեռնհաս անդամը պարտաւոր է քննութիւններին ամենալուրջ ուշադրութեամբ հետեւել՝ որոշելու համար ուսուցիչների ընդունակութիւնները և աշակերտութեան առաջադիմութեան աստիճանը։

Եթէ հասարակութեան մէջ կան կարող ույժեր, որոնք աւելի ծանօթ են մանկավարժութեան և առհասարակ կրթական գործին, ապա անհրաժեշտ է այդպիսիներին հրաւիրել մանկավարժական խառն ժողովներին՝ լսելու նրանց դիտողութիւնները։ Այդպիսի պայմաններում այդ նոյն գիտակցող անհատները պէտք է մօտ կանգնած լինեն կրթական հիմնարկութեանը, որպէսզի ծանօթ լինեն բոլոր մանրամասնութիւնների հետ։

Առ դէթ այս ձեւով պէտք է ըմբռնեն ու տանեն Անդրկասպեան երկրի հայ դպրոցների հոգաբարձութիւններն իրանց ստանձնած պարտականութիւնները, քանի դեռ գոյութիւն չունի մի բարձր և ընդհանուր ղեկավար մարմին կամ անհատ, որը իր մէջ միացնէր կրթական հիմնարկութիւնների ներքին ամենաէական ճիւղը՝ դաստիարակութեան գործը։

Որքան կարողացայ հետաքրքրվել երկրիս ծխ. դպրոցներից աւարտածների մատուրականով, ստացայ միանգամայն աննպաստ տպաւորութիւն։ Այս երկրի հայաբնակ քաղաքներից մէկի դպրոցն աւարտածներից մի քանիսը «քերականութիւն» բառի իմաստն անկարող եղան բացատրել, թուաբանութեան մէջ միանգամայն բոբիկ էին, իսկ մնացեալ առարկաներից այնպիսի յոռի տեղեկութիւն էին տալիս, որ մարդ մնում էր զարմացած, թէ դրանց ինչին էին վկայականներ տուել։

Այդ ցաւոտ երեւոյթը առաջ է գալիս նրանից, որ մեր դպրոցները մոռացութեան են մատնված։ Բարեխիղճ ուսուցիչներն իրանց պարտականութիւնները ի հարկէ սրբութեամբ են կատարում, իսկ պատահականները—և դժբաղդաբար շատերը—մի կերպ եօլա են տանում գործը, մինչև տարին կը մթնի։ Եւ այդպիսիները որպէսզի ցոյց տուած լինեն, թէ իրանք տարվայ ընթացքում գործ են կատարել, աշակերտներին փոխում են մի բաժանմունքից միւսը, իսկ վերջին դասարանցիներին վկայականներ տալով ճանապարհում։

Իմ աչքերիս առաջ կատարվեց հետեւեալը.

Աշակերտը վերջին բաժանմունքումն է։ Քննութիւնների ժամանակ կրօնից լաւ չէ պատասխանել։ Որպէսզի իր ընկերներից յետ չը մնայ, աւագ ուսուցիչը 3 օր ժամանակ է տալիս թոյլ աշակերտին՝ «դասը սերտելու», որից յետոյ վկայականը կը ստանայ։

Աշակերտը գնալով տուն՝ լաց է լինում հօր մօտ, և վերջինս իր 12 տարեկան երեխայի ձեռից բռնած եկել էր ուսուցչից վկայականը խնդրելու։

— Վարժապետ, լաց ա լինում, իր ընկերները թուղթը ստացել են, ինքը՝ ոչ. հանգստութիւն չի տալիս։ Խնդրում եմ տաս, որ ձէնը կտրի։

Եւ ուսուցիչը խոստացաւ վկայականը տալ։

Աշակերտը վկայականին նայում է որպէս մի զարդարուն խաղալիքի. քանի որ ընկերները ունեն, ապա ինքը ինչո՞ւ զրկվի։ Իսկ ուսուցիչը տալիս է, որպէսզի մէկ կողմից աշակերտը «ձէնը կտրի», իսկ միւս կողմից աւարտողների ցուցակը բազմանայ։

Սոյնանման պատկերներ գաւառական անկիւններում՝ որքան կուզէք։

Թեմ. տեսուչը անհրաժեշտ է մանաւանդ այսպիսի խուլ, աքսորական վայրերի համար, ուր ժողովուրդը դեռ թաւալվում է հնադարեան խաւարի մէջ, և, բնականաբար, անգիտակ գտնվում սոյնանման վնասակար երեւոյթներին։

Sero

Մերվ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

—o—

ՊԷՏՔ Է ԹՈՂՆԵԼ ՕՐՄԱՆԵԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ*)

Բերեմ այստեղ պատրիարք սրբազան Օրմանեանի պաշտօնական № 1230 նամակը առ Վահրամ վարդապետ.

«Վերջին օրեր ստացանք ձեր յունվար 2 թուականաւ նամակը, որով կուզէք պաշտպանել ձեր անձը և վերջին դիպուածներու մէջ վարած դերերնիդ արդարացնել։ Ձեր վրայ կատարուած ընտրութիւնը և ձեր վրայ բարդուած ամբաստանութիւնները չեմ ուզեր նկատի առնուլ. ինչ ալ ըլլան ընտրութեան պայմանները, ինչ որ ըլլան ամբաստանութեանց հանգամանքները՝ առնվազն բարձր կէտ մը կայ, որ ձեր մտադրութեան արժանի պիտի ըլլայ։ «Ամենայն ինչ ինձ մարթ է, այլ ոչ ամենայն ինչ շինէ» ըսաւ Պօղոս, և դուք, եղբայր, շինութիւնը մոռցաք։ Գովեցի զձեզ, երբ տեսայ որ եղբարց պառակտման առջև զգուշաւոր մնացիք, տեղերնէդ չշարժեցաք։ Ի՞նչ եղաւ որ եօթն ամիս ետքը առջի ուղղութենէն շեղեցաք։ Նոր հրաման ստացած ըսուելու համար պէտք էր ձեր պատրիարքէն **) ստորագրեալ նոր թուղթ ստացած լինէիք և ոչ թէ երկպառակութեանց մէջ դեր վարող անձերու գրութեանց հետեւէիք։ Մեծերու բերնէն խօսք քաշելու կերպերը ձեզ անծանօթ չեն։ Բայց առանց անոր ալ վերջին անգամ Եղիշէ***) վարդապետի յանձնուած պատուիրակութիւնը ձեզի պէտք էր համոզել, թէ որն է պատրիարքին վերջին կամքը եւ ենթադրելով ալ, որ առաջին կամքը, տարբեր եղած ըլլար, մի՞թէ պիտի պնդէ՞ք, որ մեծաւորներ չկարենան պարագային պահանջման կամ նոր ծանօթութեանց առջեւ իրենց կամքը փոխել։ Միաբանութեանց մէջ գժտութիւնք և երկպառակութիւնք վտանգաւոր են, և վա՜յ անոր, որ զայն գրգռելու առիթ կուտայ։ Ձեր պնդումը, թերեւս ձեր չուզելով ալ, այդ նպատակին կրնայ տանիլ։ Լուսարարապետութիւնը ներքին սրտի և խղճի պաշտօն է. եթէ 50 միաբանէն 26-ը ձեր կողմը լինելուն համար 24-ը կուզէք ճզմել****), չեմ կարծեր, թէ սեղանի պաշտօնէի դերը վարած լինիք։ Թողուցէք, որ այդ սկզբունքը պաշտպանեն անոնք, որ սեղանէն աւելի սեղանաւորութենէ*****) կը հասկնան։ Իբր խաղաղութեան մարդ, իբր հաշտութեան հետեւող, իբր ճշմարիտ խորհող ես ձեզ աւելի մեծ գտայ ձեր առաջին զգուշաւոր ճամբուն մէջ, քան թէ վերջին նախայարձակ դերին մէջ։ Պատրիարք մը կայ, որ ձեզի քաշուիլ կը խրատէ, եթէ չի հրամայեր. բազմութիւն մը կայ, որ ձեզ վրայ համակրութեան նուազութիւն կը զգայ. ազգը կայ, որ կռուի մէջ յաղթողներէ աւելի կռուէ փախչողները կը յարգէ. եկեղեցին կայ, որ իրաւունքէ իսկ հրաժարիլ կը յորդորէ վասն շինութեան եկեղեցւոյ *)։ Դուք ո՞րուն արդեօք կը հետեւիք, երբ զինու զօրութեամբ գրաւուած քաղաքի մը պէս կը սպասէք սրբ. Յակոբեանց գանձարանին տէր կանգնիլ։ Չէ, եղբայր, մեծ եղէք հեզութեամբ ու սիրով եւ ոչ իրաւամբ եւ յաղթութեամբ։ Ողջունիւ սիրոյ մնամք աղօթարար...»։

Չը բաւականացած սրանով, սրբազան Օրմանեան այս իր բնորոշ նամակի պատճէնը դնում է առանձին պաշտօնագրի մէջ, ուղարկում է «ընդդիմացողների» կողմն անցած Եղիշէ վարդապետ Չիլինկիրեանին ու պատուիրում է՝ «ըստ ամենայնի աջակից եւ զօրավիգն լինել սրբազան պատրիարքին եւ փոյթ տանիլ, որ խաղաղութիւնը անվրդով պահուի»... Այո, և «փոյթ տանիլ, որ խաղաղութիւնը անվրդով պահուի»։ Հասկացէք, ընթերցողներ։

Յանուն կաթողիկոսական խնդրի լըջնութեան, յանուն այն սրբութիւնների, որոնք կապված են մեր Մայր Աթոռի հետ, հրաւէր եմ կարդում մի կողմ թողնել կուսակցական մոլեռանդութիւնն ու անձնական հաշիւները և անաչառ մտածողութեամբ կարդալ սրբազան Օրմանեանի պաշտօնական գրութիւնները, ի նկատի առնել նրա ձեռք առած վարչական միջոցները՝ միաբանութեան պետին թողած, սրա անմիջական ստորադրեալներին (փոխանորդ, թարգման, թարգմանի օգնական) անմիջական հրամաններ արձակել, մէկ կուսակցութիւնը միւսի դէմ սրել յանուն խաղաղութեան և այլն և այլն։

Մեր էջմիածնի միաբանութիւնն առանց այն էլ պառակտված է։ Կանօնի պահանջածը «ճզմել» մեկնող իշխանաւորը, ստորադրեալներից չպարված հրամաններով միայն սէր և հեզութիւն և «իրաւունքէ հրաժարում» պահանջող վարչապետը, «պարագայից պահանջման կամ նոր ծանօթութեանց առջև» կամքը փոխելու իրաւունք վերապահող մեծաւորը, միւթամէբըֆներին հեշտահոգի դիմողը և այս ամենով ստորադրեալների մէջ անձնական արժանապատուութեան զգացում ժխտող բռնաւորը բնաւ չէ կարող «հայ հոգեւոր վարիչ» լինել, չէ կարող «կայուն, բարձր, ազնուացնող դաւանանք, սկզբունք և ոգի» ունենալ... Մի՞թէ սրբազան Օրմանեանի վերն առաջ բերած պաշտօնագրերը այլեւս կասկածի տեղ են թողնում, որ նա, սրբազան Օրմանեան, մարմնացումն է «բաժանեա զի տիրեսցես» յայտնի սկզբունքի։

Ռուսահայի և էջմիածնի միաբանութեան համար արդէն անդարձ կերպով անցած պէտք է համարել այն խաւար շրջանը, երբ մեծաւորները՝ իրանց կամքը պարագայից պահանջման կամ նոր ծանօթութեանց առջև ազատ էին համարում փոխելու և այս փոփոխածը թէկուզ ստորադրեալի պատիւն ու ինքնասիրութիւնը ցեխոտելու-սպանելու գնով կլլել տալու...

Եւ սրբազան Օրմանեանի կաթողիկոսական թեկնածութիւնը մոլեռանդօրէն պաշտպանում են նրանք, որոնք երէկ մէկ էլ օրը գովում էին Կարապետ սրբազանին, երբ սա իմացաւ իր պատիւը պաշտպանել ընդդէմ նոյնիսկ Ամենայն Հայոց Հայրապետի կողմից անհարկի կերպով հասցված վիրաւորանքի։ Մի՞թէ պարզ չէ, որ Կարապետ սրբազանի վարմունքն արդարացնելով՝ բողոքում էին «մեծաւորների» կողմից իրանց ստորադրեալների մէջ մարդկային արժանապատուութիւն, «իրաւունք» չը ճանաչելու բնաւորութեան դէմ։

Մի՞թէ միեւնոյն սկզբունքը չը պէտք է որոնենք անխտրապէս։

Մի վայրկեան դնենք մեզ օրինաւորապէս լուսարարապետ ընտրված Վահրամ վարդապետի պայմանների մէջ, ապրենք նրա անցրած կեանքը Յոպպէում...

Ուշադրութեամբ ու վերլուծաբար կարդանք սրբազան Օրմանեանի ձեռքերով գրված ու ստորագրութեամբ վաւերացված իր վարչական հաւատի հանգանակը...և...և խնայենք մեր լուսոյ խորան էջմիածինը, մեր ազգային բազմաչարչար եկեղեցին...

Մեսրոպ ա.-ք. Մելեան

---

*) Տես «Մշակ» №№ 155 և 156.

**) Այս դիպուածում պատրիարքական փոխանորդը՝ «երկպառակութեանց մէջ դեր վարող անձն է» համարվում... սրա գրութիւնը, հիմնված պատրիարքի հրամանի վրա, «մեծերու բերնէն խօսք քաշել» է թարգմանվում...

***) Չիլինկիրեանին «բողոքողները» թարգմանի օգնականի պաշտօն տալով՝ իրենց կողմն էին թեքել...

****) Կանոնագրութեան հիման վրա՝ ձայների առաւելութիւնն է ընտրում. հետեւապէս սրբազան Օրմանեան երբ մեղադրում է մէկին 26-ով 24-ին ճզմելու մէջ, թե չէ՞ տալիս արդեօք միւսին 24-ով 26-ին ճըզմելու...

*****) Ակնարկում է Ղեւոնդ վարդապետին, որի մասին խօսում են, որ սեղանաւորութեամբ խոշոր գումարներ է վաստակել... Ահա այս գումարներից մասն և բաժին ստանալու փորձը մի կողմից և չը ստանալու յուսախաբութիւնը միւս կողմից առաջ է բերել անհագին փոթորիկ սաղմական ազգային շահերի անուան տակ... Ո՞րքան սազական է և ո՞րքան բան է արտայայտում սրբազան Օրմանեանի պաշտօնական գրութեան մէջ այդպիսի ակնարկների, վիրաւորիչ դարձուածքների գործածութիւնը...

*) Ինչ գեղեցիկ է ստորադրեալին պատուիրել իրաւունքից հրաժարվե՜լ, հեզութեան ու սիրոյ քարոզ կարդալ՝ իրաւունք և յաղթութիւն թողնել... Արդեօք ինքը սրբազան Օրմանեանը չը գիտէ՞, որ «բազմութիւն մը կայ, որ իր վրայ համակրութեան նուազութիւն կը զգայ». բայց ինչո՞ւ չէ հրաժարվում թեկնածութիւնից հրապարակաւ...

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Երէկ, յուլիսի 22-ին, Մայր Թագուհի Մարիա Ֆէօդորօվնայի անուանակոչութեան օրը, Ալեքսանդրօ-Նեւսկի զինւորական տաճարում կատարվեց մաղթանք Մայր Թագուհու արեւշատութեան համար։ Մաղթանքներ կատարեցին նաև վանքի մայր տաճարում և այլ դաւանութիւնների աղօթատներում։ Մաղթանքից յետոյ Արսենալի լեռան վրայից թնդանօթաձգութիւն տեղի ունեցաւ։

◆ Մեզ հաղորդում են, որ պրօֆ. Ա. Վօէյկովը Ելենովկա գիւղից մտադիր է այցելել Սեւանայ վանքը։ Պրօֆեսորը շատ հետաքրքրվում է Սեւանայ լճի ջրերի վերաբերեալ խնդիրներով։ Նա դեռ ապացուցված չէ համարում լճի ջրի պարբերաբար շատանալու և պակասելու շրջանների գոյութիւնը։ Նոր-Բայազէտի գաւառից պրօֆեսորը մտադիր է ուղեւորվել դէպի էջմիածին և ծանօթանալ նրա նշանաւոր յիշատակարանների հետ։

◆ Մեզ հաղորդում են, որ առաջիկայ սեպտեմբերին թէ Հայ և թէ Վրացի Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութիւնները պէտք է մշակեն գործունէութեան նոր ծրագիրներ, օգտվելով այն փորձերից, որոնք եղել են վերջին տարիները մեր երկրում՝ բարձրացնելու գիւղատնտեսութեան վիճակը գիւղացիութեան շրջաններում։

◆ Այս տարվայ հունձի մասին մեր ստացած վերջին տեղեկութիւնները ընդհանուր առմամբ անմխիթարական են և հացը շատ տեղերում թանգացել է։ Բօրչալուի գաւառի տափարակում և լեռնաստաններում հացը շատ պակաս է դուրս եկել։ Փամբակում հացը լաւ վիճակի մէջ է։ Ղազախի, Գանձակի, Ջիւանշիրի ստորին մասերում հացը լաւ է միայն ջրարբի տեղերում, իսկ անջրդի տեղերում վնասվել է։

◆ Լսում ենք, որ Կախէթում յայտնվել են ֆիլօքսերայով վարակված նոր այգիներ։ Ֆիլօքսերային կօմիտէտը ուղարկում է այդ նոր տեղերը մասնագէտներ՝ հետազօտելու և բժշկելու։

◆ Քաղաքագլուխ Ալ. Խատիսեանը մեկնեց Աբասթուման։

◆ Յուլիսի 20-ին տեղի ունեցաւ Թիֆլիսի քաղաքային ընտրողների ցուցակները քննող մասնաժողովի նիստը, մասնակցութեամբ Թիֆլիսի քաղաքային վարչութեան։ Որոշվեց տպագրութեան տալ բոլոր ընտրողների ցուցակը, որոնց թիւն է՝ 7943 տնատէրեր և առեւտրականի ցէնզ ունեցողներ։ Մինչև յուլիսի 20-ը ապառիկներ վճարել են 3834 ընտրողներ, այսինքն մօտ 54%. ապառիկների վճարման այսպիսի տոկոս ուրիշ անգամների ընտրութիւնների նախօրեակում երբեք չէ տեսնված։

◆ Թիֆլիսի վաճառականութեան աւագ Ա. Միլեանը, որոշելով հրատարակել Թիֆլիսի վաճառականութեան պատմութիւնը, դիմել է բոլոր առեւտրականներին և առհասարակ այն բոլոր անձանց, որոնք այս կամ այն կերպ կապ են ունեցել Թիֆլիսի վաճառականութեան պատմութեան հետ, խնդրելով ուղարկել իրանց մօտ եղած նիւթերը՝ խոշոր վաճառականների նկարները, նրանց կենսագրութիւնները, նրանց վերաբերմունքը դէպի հասարակական կեանքը, նամակները, բնորոշող գրութիւնները, մի խօսքով այն ամենը, որոնք հետաքրքրական կը լինեն պատմութեան համար։

◆ Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան նախկին իրաւասու Ս. Միրզոյեանը առաջարկել է քաղաքագլխին սալայատակել Թիֆլիսի փողոցներից մի քանիսը նոր ձեւով, այն է փոշիացրած ձիւթով, որպիսի գիւտը պատկանում է Բելգիայի ինժեներ՝ քիմիկոս Ռուբէնին։ Ս. Միրզոյեանի ասելով՝ այդ միջոցը աւելի գործնական և գիմացկուն է, և իւրաքանչիւր քառակուսի սաժէնը կարժենայ 6 րուբլի։ Քաղաքագլուխ Ա. Խատիսեանի յանձնարարութեամբ Ս. Միրզոյեանը Անտվէրպէնից (Բելգիա) այդ նիւթից հեռագրով պահանջել է 900 պուդ, փորձնականապէս սփռելու համար մի որոշ տարածութեան վրա։

◆ Յուլիսի 20-ից Թիֆլիսի Նախալօվկա արուարձանը լուսաւորվում է էլեքտրականութեամբ։ Լապտերների թիւը 45 է. իսկ մի ամսից աւելի է, ինչ այս մասում գործում է էլեկտրական տրամվայ, որը սկիզբ է առնում Աւճալեան փողոցի վրա գտնվող ժողովրդական լսարանի մօտերքից և գնում է մինչև Նախալօվկա արուարձանի ծայրը։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը որոշեց ամբողջ Միքայէլեան փողոցը լուսաւորել էլեքտրականութեամբ, և մինչև լոյս։ Առաջ այդ փողոցի որոշ մասերը լուսաւորվում էին կերօսինօ-կալիլեան լապտերներով և լոյսը վառվում էր գիշերվայ մինչև 2 ժամը։ Էլեքտրական լապտերները կը կախվեն փողոցի մէջտեղի վրա, իսկ կերօսինօ-կալիլեան լապտերները կը տեղափոխվեն այլ փողոցների լուսաւորութեան բարւոքման համար։

◆ Թիֆլիսի պօստային գրասենեակի Հալաբարի բաժանմունքում յուլիսի 20-ից սկսվել է միջազգային հեռագիրների ընդունելութիւնը։

◆ Յուլիսի 20-ին կայացաւ Թիֆլիսում նոր մուզէում կառուցող մասնաժողովի նիստը, քաղաքագլուխ Ալ. Խատիսեանի մասնակցութեամբ։ Ժողովականները հաւանութիւն տուին ինժ. Տատիշչեւի կազմած յատակագծին և որոշեցին նախ և առաջ քանդել հին մուզէումի այն մասը, որ գտնվում է Լօրիս-Մելիքեան փողոցի վրա, և ապա ձեռնարկել չորս յարկանի տան կառուցմանը՝ մուզէումի համար։

◆ Իմէրէթի թեմի թեմական տեսուչ Ժօրդանիան հրաժարվել է իր պաշտօնից։

◆ Աւճալեան ջրմուղի կառավարիչ ինժեներ Ս. Կամիչկիրցեվը թողնում է իր պաշտօնը և նոյնպիսի գործով տեղափոխվում է Բագու։

◆ Թիֆլիսի «Աշխատանքի Տանը» զեմստվոյական միջոցներից 1,000 րուբլի նպաստ է յատկացվել։

◆ Մօտ ժամանակներս Կովկաս կը գայ մեր հայրենակից յայտնի օպերային երգիչ Բ. Ամիրջանը և կը տայ մի շարք համերգներ Կովկասի այլեւայլ վայրերում։

◆ Թիֆլիսի Նահանգապետ Ա. Չերնեավակին երէկ մեկնեց Դուշէթի գաւառը պաշտօնական գործերով։

◆ Այս օրերս Քութայիս է ժամանել գերմանական նաւատորմի լէյտէնանտ Շմիդտը, որը ոտքով շուրջաշխարհեան ճամբորդութիւն է կատարում։

ՏԵՂԵԿ. ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Բանաստեղծ Ա. Ծերեթելին մեծ ոգևորութեամբ ընդունվել է Թէլաւի հասարակութեան կողմից։ Տրվել է մեծ ճաշկերոյթ բացօդեայ, հազարամեայ չինարենու ստուերի ներքոյ։

◆ Թէլաւում՝ ի յիշատակ Իլիա Ճավճավաձէի, յուլիսի 20-ին տեղի է ունեցել գրական-երաժշտական երեկոյթ, կենդանի պատկերներով, որոնք վերցված են եղել հանգուցեալ բանաստեղծի գրուածքներից։

◆ Հանգուցեալ Իլիա Ճավճավաձէն ծնվել է Կախէթի Ղվարելի գիւղում, որտեղ մինչև այժմ էլ գոյութիւն ունի նրան պատկանող փոքրիկ կալուածքը և տունը։ Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութիւնը հանգուցեալ բանաստեղծի յիշատակը կենդանի պահելու համար ժողովրդի սրտում, վճռել է ձեռք բերել յիշեալ ինչքը, որպէսզի նա մասնաւոր մարդոց ձեռքը չանցնէ։

◆ Վրաց երիտասարդ բանաստեղծ Ի. Գրիշաշվիլին յուլիսի վերջերում, Քութայիսում կը կազմակերպէ մի երեկոյթ, վրաց հին և նոր գրողների մասնակցութեամբ։ Երեկոյթի ծրագիրը հետաքրքրական է։

◆ Քութայիսի շրջանի հոգաբարձութիւնը մերժել է Նոր-Սենակիի բնակիչների այն խնդիրը, որով նրանք՝ Հին-Սենակիի ազնուականութեան դպրոցի մէջ ծագած հրդեհից յետոյ խնդրում էին դպրոցը Նոր-Սենակի փոխադրել։

◆ Բանասէր Թ. Ժորդանիան մի ուսումնասիրութեամբ ապացուցում է, որ Ռաճայի լեռնային մասում գտնվող Մրավալձալի վանքում պահվող սաղաւարտը պատկանում է XIII դարում ապրող պարսից Ջալ-Էդդին շահին, որը արշաւելով Վրաստան առաջարկեց Վրաստանի Թագուհի Ռուսուդանին (Մեծն Թամար Թագուհու դուստր) ամուսնանալ իր հետ, որով Պարսկաստանում և Վրաստանում կը հիմնվէր մի ընդհանուր թագաւորութիւն։ Մերժումն ստանալով Թագաւորող Ռուսուդանից, նա պատերազմի բռնվեց վրացիների հետ և յաղթվելով վերջիններից, հեռացաւ Վրաստանի սահմաններից։ Պատերազմի ղեկավարներից Աւագ Օրբելիանին և Կուցնա Ամիրէջիբին յաղթական դուրս գալով պատերազմից, խլեցին յիշեալ շահի սաղաւարտը և դրօշակը և նուէր բերին Թագուհի Ռուսադանին, որոնք այժմ պահվում են Մրավալձալի կոչված վանքում։ Սաղաւարտից այժմ մնացել է միայն պղնձէ մասը, ոսկեղէն մասերը անհետացել են. իսկ դրօշակի միայն ձողն է մնացել յիշեալ վանքում պահված։ Այսպիսով Մրավալձալիի վանքը տէր է 7 դարու անցեալ ունեցող երկու հազուագիւտ հնութիւնների։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Աբասթուման, 17 յուլիսի

Ամսիս 16-ին Աբասթումանի հանքային ջրերի բոտոնդօյում դերասան Շահէն ամուսինները թէ ամարանոցաւոր և թէ տեղային սիրող-սիրողուհիների մասնակցութեամբ տուին մի ներկայացում։ Խաղացին Ցագարելիի 3 գործ. «Խանում» յայտնի կոմեդիան։ Ընդհանուր առմամբ խաղն անցաւ սահուն և լաւ տպաւորութիւն թողեց ներկայ եղող հասարակութեան վրա։ Դերակատարներն արժանացան բուռն ծափերի։

Երրորդ գործողութեան մէջ պ. Շահէնը սազանդարների նուագածութեամբ երգեց ռուսերէն և հայերէն կուպլէտներ։

Դահլիճը կէսից աւելի լիքն էր։ Աչքի էր ընկնում մեր ինտելիգենցիայի բացակայութիւնը։

Խումբը մօտ ապագայում կը ներկայացնէ «Կրեչինսկու հարսանիքը»։ Մ. Գէ-եան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 19 յուլիսի

Թոյլ տուէք ձեր լրագրի միջոցով յայտնել իմ խորին շնորհակալութիւնը Աբասթումանի բնակիչ պ. Կ. Քեշիշեանին, որը ինքնաբերաբար նուիրել է յօգուտ սանատորիայի մի 100 րուբլի ի յիշատակ իր վաղամեռիկ ամուսին Աննա Գրիգորեան Քեշիշեանի, և պ. պ. Խ. Իսահակեանին և Մ. Ա-ին, որոնք նուիրել են 5-ական րուբլի յօգուտ Աբասթումանում տրվելիք գրօսանքի նոյն նպատակի համար։

Իշխ. Մ. Թումանեան

—

Շուշի, 16 յուլիսի

Մենք առիթ ունեցանք կարդալ «Մշակի» № 144-ում *-ի «Անտարբերութիւնը ազգային-հասարակական գործերում» վերնագիրը կրող թղթակցութիւնը Շուշուց։

*-ը, գովելով Կ. Հ. Բ. Ը. տեղւս ճիւղի գրադարանապետ՝ Պօղ. Զաքարեանի վերին աստիճանի կարգապահութիւնը, մաքրութիւնը և ճշդապահութիւնը, աւելացնում է, որ գր.-ընթերցարանը շատ քիչ յաճախորդներ ունի, որ բնիկ շուշեցիները ամենևին չեն հետաքրքրվում ազգային գործերով և հիմնարկութիւններով և որ ամարանոց եկողները նոյնպէս ընթերցարան չեն յաճախում ու բարւոք են համարում «Թօփխանայում» կանգնել, վրոյցներ անել կամ Բեխի աղբիւր ու Դարաբուլաղ գնալ։ Այնուհետև իր դժգոհութիւնը յայտնելով, որ 10,000 հայ բնակչութիւն ունեցող Շուշին տալիս է Բարեգործական Ընկերութեան միայն... 83 անդամ, *-ը ցանկութիւն է յայտնում, որ քաղաքիս հոգևորական դասը յորդորէ ծխականներին անդամակցել Կ. Հ. Բ. Ը. տեղւս ճիւղին։

Ճիշդ է, Կ. Հ. Բ. Ը. Շուշու ճիւղի գրադարանապետը կարգապահ և բարեխիղճ է իր պաշտօնում։ Բայց միթէ այդ հանգամանքը բաւական է, որպէսզի Շուշու հայութիւնը անդամակցի յիշեալ Ընկերութեան և ընթերցարան յաճախէ։ Կամ միթէ «բնիկ շուշեցիները» պարտաւոր են անդամակցել մի Ընկերութեան, որի վարչութիւնը իր կոչման բարձրութեան վրա չէ կանգնած։

Սակայն կան և մի քանի այլ պատճառներ, որոնք յետ են հրում հասարակութեանը գր.-ընթերցարանից։ Մեր գր.-ընթերցարանը աղքատ է իր գրքերով և պարբերական հրատարակութիւններով. նա գտնվում է խոնաւ, մութ և ցուրտ բնակարանում և գինետան դիմաց, որտեղից ամեն րոպէ լսվում են ոչ հաճելի ձայներ։ Մինչև հիմա մեր գրադարանը չունի գրացուցակ։

Չը պէտք է զարմանալ ուրեմն, երբ այսպիսի պայմաններում հասարակութիւնը անդամակցում է ակմբանոցին, որի գրադարանը ճոխ է, ընթերցարանը ստանում է 50 պարբերական հրատարակութիւններ՝ հայերէն, ռուսերէն, թուրքերէն, վրացերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով. այդտեղ կան տաք սենեակներ, առատ լուսաւորութիւն և զուարճութիւններ։

Բարեգործական Ընկերութեան վարչութիւնը գուցէ առարկէ, թէ Ընկերութեան միջոցները սուղ են և որ նա չէ կարող իր գր.-ընթերցարանը աւելի ճոխացնել։ Այդ դէպքում ինչ կարիք կայ միաժամանակ պահել «սուղ միջոցներով» վատ գր.-ընթերցարան, ծխ. դպրոց և այլն, քանի որ կարելի է և պէտք է պահել միայն գր.-ընթերցարանը լաւ դրութեան մէջ։ Տեսէք թէ այն ժամանակ հասարակութիւնը ինչպէս կը հետաքրքրվի Բարեգործական Ընկերութեան գր.-ընթերցարանով։

Կոստ. Ղազարբէկեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Լոնդոնից հաղորդում են, որ Մահմէդ-Ալին գահաժառանգ է յայտարարել իր եղբայր Շօա-ուս-Սալթանէին։

◆ Պարսից կառավարութեան կոչին բախտիարները և ֆէդայիները դժկամութեամբ են ընդառաջում, չուզենալով կռւել էքս-շահի դէմ։ Նրանց թիւը Թէհրանում 1,600-ի է հասնում։

◆ Շնորհիւ նահանգապետի դաւաճանութեանը՝ Համադանը, լուրերին նայած, գրաւել են նախկին շահի զօրքերը։

◆ Էքս-շահի գլուխը 100,000 թումանի գնահատելու մասին կայացրած վճիռը մէջլիսի կողմից տեղի է ունեցել ռամկավարական կուսակցութեան պահանջով։

◆ Անգլիական և ռուսական դեսպանները մի գրութիւն ուղղեցին պարսից կառավարութեանը, որով խոստովանում են, որ էքս-շահը թոշակ ստանալու իրաւունքը կորցրել է արդէն։

◆ Մայրաքաղաքի թերթերի ասելով, պարսից կառավարութիւնը պատրաստում է մի բողոքագիր, ուղղված եւրոպական բոլոր պետութիւններին, որով բողոք է յայտնվում էքս-շահին ռուսական գործակալների կողմից աջակցութիւն ցոյց տալու դէմ։

◆ Պետերբուրգում ստացված տեղեկութիւններից իմանում ենք, որ ցայսօր Մահմէդ-Ալիին հպատակութիւն են յայտնել վեց քաղաքներ։ Հաղորդվում է, որ պարսից զօրքերի մէջ խլրտումն է տիրում։ Ուժեղ ագիտացիա է մղվում պարսից ներկայ կառավարութեան դէմ։

◆ Թէհրանի զօրքերի մէջ երևան են հանված դաւաճանութեան բազմաթիւ դէպքեր, որոնք լուրջ մտահոգութիւն են պատճառում պարսից կառավարութեանը։

◆ Թիւրքաց գեներալ Աբդիւլլահի առաքումը դէպի Չերնօգորիայի սահմանները՝ նոր զօրքերով՝ քաղաքական շրջաններում համարվում է որպէս նախակարապետ գալիք բարդութիւնների։

◆ Չինական կառավարութեան պատուէրով՝ Կրուպպի զինագործարանը պատրաստել է մեծ քանակութեամբ զէնք, մօտաւորապէս կէս միլիոն տաէլի արժողութեան։ Այս օրերս զէնքերը կը ստացվեն Պեկինում։

◆ Չինացիները նոր միայն նկատեցին, որ եապօնացիները ժանտախտի բարակների պատրուակի տակ կառուցել են զօրանոցներ, որոնք կարող են տասը հազարանոց զօրքեր պատսպարել իրանց մէջ։

◆ Վիլհէլմ կայսրի և կանցլեր Կիդերլէն-Վեխտերի միջև կայացած տեսակցութեան ժամանակ քննվեց այն հարցը, թէ ինչ միջոցներ պիտի ձեռնարկել, եթէ Գերմանիայի և Ֆրանսիայի միջև մղվող բանակցութիւնները մարօկկեան հարցի առիթով անաջողութեան հանդիպեն։

◆ Պարիզից տեղեկացնում են, որ գերմանական զօրքի վեց զինուորներ անցնելով սահմանը, ֆրանսիական հողի վրա կտրտել են հեռագրային լարեր, առաջացնելով ընդհանուր յուզմունք։

◆ Վլադիվօստոկի շրջանից հեռագրում են, որ այդ վայրերում երևան են եկել մեծ քանակութեամբ խունխուզների խմբեր, որոնք սպառնալիքով դրամ են պահանջում գործարանատէրերից։ Թէև նրանց ոչնչացնելու համար ուղարկված են զօրքեր, բայց անկարելի է լինում նրանց կալանաւորել, որովհետև տեղական ազգաբնակութիւնը, ըստ երևոյթին, նրանց օգնում է։

◆ Սէուլից հաղորդում են, որ թւով 32 կորէացիներից, որոնք մեղադրվում էին եապօնական կառավարութեան կողմից յեղափոխական ագիտացիա մղելու գործում, յանցանքների խոստովանութիւնը առնվել է չարչարանքների և տանջանքների միջոցով, որոնց ենթարկվում էին կորէացիները եապօնական ոստիկանութեան ձեռքով։ Մեղադրեալների շարքումն է գտնվում նաև կորէական «Եանկլիտակ» թերթի խմբագիրը. թերթը լոյս էր տեսնում անգլիերէն լեզուով։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

21 յուլիսի

ՏՕԿԻՕ։ Կորէական գեներալ-նահանգապետ Տէրաուչին մեկնում է Եապոնիա՝ կորէական նախկին գահաժառանգի հետ միասին։

Վերադարձաւ բրիտանական դեսպանը։

ԿԻԵՎ։ Հարաւ-արևմտեան երկրի մի խումբ խոշոր հողատէրեր Կիէվում հիմնում են գիւղատնտեսական բանկ փայերով։ Նախնական ստորագրութիւնը տուեց աւելի քան երկու միլիոն րուբլի։

Մոսկով-Կիէվ երկաթուղագծի վրա հեղեղը ծածկել է գիծը. կամուրջները ջուրը քշել տարել է։

ՕԴԵՍՍԱ։ Ոստիկանութիւնը կալանաւորեց 3 հոգու, որոնք «Միխաիլ» շոգենաւով պատրաստվում էին ռումբեր և հրազէններ տանել։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Աջող թռիչքներ կատարեցին Ֆարմանով կապիտան Միլլէրը, Տունօշէնսկի և Մակէեվ պօրուչիկները։

ԲՐԵՍԼԱՒ։ Համալսարանի յօբելեանի առիթով պրինց Ալէքսանդր Օլդենբուրգսկին ընտրվեց Honoris causa բժշկութեան դօկտոր։

ԿԻԵՎ։ Ալէքսանդր II-ի արձանի համար Բրոդսկին նուիրեց 5,000 ր., Տերեշչենկօն 5,000 ր.։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ժող. լուս. մինիստրութիւնը պատուիրագրեց ուսումն. շրջանների հոգաբարձուներին ձեռնարկել մշակելու կանոններ, որոնցով համալսարանական քաղաքներում հաստատվելու են միամեայ դասընթացքներ՝ ուսուցիչներ և վարժուհիներ պատրաստելու համար։ Պարապմունքները մտադրութիւն կայ սկսել այս սեպտեմբերից։

Մոսկվայից վերադարձան բեռնակիր աւտօմօբիլները, որոնք անցել են ընդամենը 1,500 վերստ։

ԵԱՐՕՍԼԱՎԼ։ Ագրոնօմների և կառավարական մասնագէտների ժողովում վճռվեց լայն կերպով զարգացնել մանր վարկի գործը, հիմնել պետական գիւղատնտեսական բանկ, մտցնել ընդհանուր զէմստվային ագրոնօմիա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Արդարադատութեան մինիստրութեանը կից կազմված մասնաժողովը գտաւ գրականական կոնվենցիայի ֆրանսիական նախագիծը անընդունելի, որովհետև նա պակաս չափով է պաշտպանում ռուս հեղինակների իրաւունքները Ֆրանսիայում, լաւ իրաւունքներ տալով ֆրանսիացիներին Ռուսաստանում։ Մասնաժողովը որոշեց կոնվենցիան կնքելու ժամանակ մի յօդուած ևս մտցնել երաժշտական հրատարակիչների և գրողների շահերը պաշտպանելու մասին։

Փոքրահասակ զինւորացուներին Թագաւոր կայսրը կը բարեհաճէ դիտել յուլիսի 28-ին Մարսեան դաշտում։

ՏՐԻԵՍՏ։ Երևան հանվեցին խոլերայի նոր դէպքեր։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Высочайше Утвержденное Русское Общество Пароходства и Торговли, учрежд. въ 1856 г.
ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.
Ամառային երթևեկութիւն
ՂՐԻՄ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻԾ
Մեկնում են Բաթումից
I **Պօստային-մարդատար շոգենաւերը.**
Երեքշաբթի ժամի 12½-ին գիշերը շրջանակի գծով.
Հինգշաբթի » 12½ » » »
Շաբաթ » 12½ » ուղղակի »
II **Մարդատար շոգենաւերը.**
Երկուշաբթի ժամի 1 ցերեկը, շրջանակի գծով։
Շաբաթ » 12 » » »
III **Մարդատար-ապրանքակիր շոգենաւերը.**
Չորեքշաբթի առաւ. ժամի 4-ին շրջանակի գծով.
Ուրբաթ » » » » »
Ժամերը Պետերբուրգի են։
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՓՈՍՏԱՅԻՆ ԳԻԾ
Կանոնաւոր հաղորդակցութիւն դէպի Ալէքսանդրիայի, Բուլղարիայի, Մակեդոնիայի, Սերբիայի, Անատոլիայի, Պարսից-Ծոցի (Персидскій заливъ) գծերի բոլոր նաւահանգիստները։
ԲԱԼՏԻԱԿԱՆ ԳԻԾ
Կանոնաւոր հաղորդակցութիւն ուղղակի Պետերբուրգ, Ռիգա, Լիբավա և Ռէվել։
Տոմսակները կարելի է գնել Թիֆլիսի գրասենեակում, Վելիամինովսկայա փողոց, № 18.
Հեռախօս № 11.
Ընդունվում են եւ ապահովագրվում են ապրանքներ ձեռնտու պայմաններով։
Գործակալ՝ Ս. Խ. Սուլխանեանց
(շ.) 0—11

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱՔՈՒ՝ **արագ № 2 գնացքը՝** 9 ժ. 38 ր. առաւօտ., Աղստաֆա է հասնում 12 ժ. 15 ր. կէսօրին, Գանձակ՝ 2 ժ. 47 ր. ցեր.., Եւլախ՝ 4 ժ. 20 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բալաջարի՝ 11 ժ. գիշ., Բաքու՝ 11 ժ. 33 ր. գիշեր.։ **Պօստատար № 4 գնացքը՝** 12 ժ. 36 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 8 ժ. 28 ր. գիշ., Գանձակ՝ 6 ժ. 37 առաւօտ., Եւլախ՝ 3 ժ. 35 ր. առաւօտ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 7 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 24 ր. ցերեկ., Բաքու՝ 5 ժ. 42 ր. ցերեկ.։ **Մարդատար № 6 գնացքը՝** 3 ժ. 34 ր. ցեր., Աղստաֆա է հասնում՝ 6 ժ. 46 ր. երեկ., Գանձակ. 9 ժ. 57 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 54 ր. գիշեր.՝ Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 22 ր. գիշ., Բալաջարի՝ 7 ժ. 36 ր. առաւօտ., Բաքու՝ 8 ժամ 13 ր. առաւօտ.։ **Խառն գնացքը՝** IV կարգի վագոններով ըստ հարկի կարևորութեան՝ 5 ժ. 15 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 9 ժ., 19 ր. առաւօտ., Գանձակ՝ 1 ժ. 36 ր. ցեր., Եւլախ՝ 5 ժ. 4 ր. երեկ., Հաջի-Կաբուլ՝ 11 ժ. 44 ր. գիշեր., Բալաջարի՝ 4 ժ. 33 ր. գիշ., Բաքու՝ 5 ժ. 44 ր. առ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ **պօստատար № 74/75՝** 1 ժ. գիշ., Ղարաքիլիսա է հասնում 8 ժ. 16 ր. առաւօտ., Ալէքսանդրօպօլ՝ 11 ժ. 50 ր. ցերեկ., Էջմիածին կայար.՝ 5 ժ. 7 ր. երեկ., Ուլուխանլու՝ 5 ժ. 34 ր. երեկ. (առանց Երևան մտնելու)։ Սակայն Ուլուխանլուից առանձին գնացքը ուղևորվում է Երևան 6 ժ. 11 ր. երեկ. և հասնում է Երևան 6 ժ. 54 ր. երեկ., Նախիջևան՝ 11 ժ. 2 ր. գիշեր., Ջուլֆա՝ 12 ժ. 46 ր. գիշերվայ։ **Մարդատար-ապրանքատար № 78/79 գնացքը՝** 5 ժ. 48 ր. երեկ., Ղարաքիլիսա է հասնում 1 ժ. գիշերվայ, Ալէքսանդրօպօլ՝ 4 ժ. 34 ր. գիշ., Էջմիածին կայարան՝ 9 ժ. 45 ր. առաւ., Երևան՝ 11 ժ. 10 ր. ցերեկվայ և սրանից դէնը այլևս չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ **արագ. № 1 գնացքը՝** 11 ժ. 8 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 2 ժ. 10 ր. գիշ., Բաթում՝ 9 ժ. 43 ր. առաւօտ։ **Պօստատար № 3 գնացքը՝** 10 ժ. 47 ր. առ., Միխայլօվօ է հասնում 3 ժ. ցերեկվայ, Բաթում՝ 12 ժ. 35 ր. գիշ.։ **Մարդատար № 5 գնացքը՝** 5 ժ. 15 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 9 ժ. 27 ր., երեկ., Բաթում՝ 6 ժ. 26 ր. առ.։ **Խառն գնացքը** IV կարգի վագոններով ըստ հարկի կարևորութեան 10 ժ. 3 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 4 ժ. 41 ր. գիշ., Բաթում 6 ժ. 4 ր. երեկոյեան։

ԲՈՐԺՈՄ՝ **մարդատար № 7/8 գնացքը՝** 8 ժ. 18 ր. առաւօտ., Գօրի է հասնում 10 ժ. 52 ր. առ., Բորժոմ՝ 1 ժ. 38 ր. ցերեկ.։ **Մարդատար № 9/10 գնացքը՝** 3 ժ. ցերեկ., Գօրի է հասնում 5 ժ. 34 ր. երեկ., Բորժոմ՝ 8 ժ. 28 ր. երեկոյեան։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱՔՈՒԻՑ՝ **մարդատար № 5 գնացքը՝** 4 ժ. 25 ր. ցերեկ.։ **Պօստատար № 3 գնացքը՝** 9 ժ. 52 ր. առ.։ **Արագ № 1 գնացքը՝** 10 ժ. 24 ր. երեկ.։ **Խառն գնացքը** IV կարգի վագոններով՝ 9 ժ. 5 ր. երեկ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ **պօստատար № 72/73 գնացքը՝** 7 ժ. 38 առաւօտ.։ **Մարդատար-ապրանքատար՝ № 80/81 գնացքը՝** 1 ժ. 26 ր. ցերեկվայ։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ **արագ № 2 գնացքը՝** 8 ժ. 52 ր. առաւօտեան։ **Պօստատար № 4 գնացքը՝** 11 ժ. 40 ր. գիշ.։ **Մարդատար № 6 գնացքը՝** 2 ժ. 54 ցերեկ. **Խառն գնացքը** IV կարգի վագոններով՝ 4 ժ. 17 ր. գիշերվայ։

ԲՈՐԺՈՄԻՑ՝ **Մարդատար № 9/10 գնացքը՝** 9 ժ. 28 ր. գիշ.։ **Մարդատար № 7/8 գնացքը՝** 7 ժ. 18 ր. առաւօտեան։

Ծանօթութիւն.—Արագ գնացքներով (№ 2՝ Թիֆլիսից Բաքու և № 1 Բաքու-Թիֆլիս) առանց վագոն փոխելու կարելի է հաղորդակցել Թիֆլիս-Բաքու Ռոստով, միայն վճարելով պլացկարտի գինը։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐԱՐԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Գ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզանօս. հ.։
Ա. Մ. ՓՈՒԼԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐԱՑ—12½—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Գ. Յ. ԳՈՒՐԳԷՆՕՎ—1—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
3. 0—73

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պատրաստվում է տպագրութեան
Թւաբանութեան
դասագիրք
ՀԱՅՈՑ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԵՒ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Կազմեց Սիմ. Հովեան
(օ.ժ.) 733. 4—1

Իգդիրի երկդասեան ծխական դպրոցի համար հարկաւոր են մի **ԱՒԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉ** 12 դասով և **8 ՈՒՍ.-ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐ** բոլոր առարկաների համար։ Ցանկացողները թող դիմեն հոգաբարձութեան մինչև յուլիսի 25-ը, յայտնելով իրանց կրթական ցենզը և պայմանների մասին։
Հասցէ՝ Игдырь, Попечительству армянской школы.
(ա. օ.) 731. 2—2

Լոյս տեսաւ
Ս. ՋԵՐԲԷՃԵԱՆԻ
Օսմանեան գրպարտութեան ցանցերում
Գինն է 30 կոպ.
Դիմել «Հովիտի» խմբագրութեան և գրավաճառներին։ (ա.օ.) 717. 10—8

1911 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
բաշխելու է երեք մրցանակ.
ա) Ցանուն տիկին Մ. Մակարեանի լաւագոյն ինքնուրոյն պիէսի համար (150 ր.)
բ) «Ցօբելեանական» (ի յիշատակ ռուսահայ թատրօնի յիսնամեակի) լաւագոյն թարգմանական պիէսի համար (100 ր.)։
գ) Ցանուն Ա. Մելիք-Այվազեանի լաւագոյն, ոչ մի տեղ չը ներկայացված ինքնուրոյն պիէսի համար (մօտ 150 ր.)։
Հեղինակները և թարգմանիչները, եթէ ցանկանում են գաղտնի պահել իրանց անուն-ազգանունը, կարող են կեղծանուն գրել պիէսների վրա, իսկական անուն-ազգանունները գրելով մի փակ ծրարի մէջ, որ կը բացվի միմիայն մրցանակաբաշխ յանձնաժողովի որոշումից յետոյ։
Այս տարի պիէսները ընդունվում են մինչև սեպտեմբերի 15-ը, որից յետոյ ստացված պիէսները քննութեան չեն առնվի։
Մրցանակի կարելի է ներկայացնել միմիայն նոր պիէսներ, այսինքն այնպիսի պիէսներ, որոնք հայ բեմի վրա դեռ չեն ներկայացված կամ առաջին անգամ ներկայացված են վերջին թատերաշրջանում (առաջին և երկրորդ մրցանակներ)։
Մրցանակը կարող է յատկացվել լիովին կամ կիսով չափ, նայելով պիէսի գրական արժանաւորութիւններին։
Մրցանակի արժանացած պիէսի առաջին ներկայացման իրաւունքը պատկանում է Դրամատիկական Ընկերութեան և այդ ներկայացման համար Վարչութիւնը թարգմանիչներին ոչինչ չէ վճարում, իսկ ինքնուրոյն պիէսների հեղինակներին վճարում է զուտ արդիւնքի 10%-ը։
Այդ իրաւունքը վերապահվում է Վարչութեան միմիայն մի տարվայ ընթացքում սկսած պիէսի ստանալու օրից։
Պիէսներ պէտք է ուղարկել Վարչութեան նախագահին հետևեալ հասցէով. Тифлисъ, ул. Паскевича, 1. Т. Н. Іоаннисянцу. Արտասահմանից՝ Tiflis (Russie), rue Paskevitch 1. M-r Tigran Ioannissian avocat.
(26, յուլ. 23, օգ. 14.) 691. 3—2

ՄԵՐՎԻ ՀԱՅՈՑ ԾԽԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ հարկաւոր են ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ
հետևեալ դասերի համար
Ա. Թւաբանութիւն II, III և IV բաժանմունքներում . . . . 12 դաս
Հայոց լեզու I բաժանմունքում . . . . . 6 դաս
Նկարչութիւն բոլոր ուսումնարանում . . . . . 7 դաս
Բ. Հայոց լեզու II և III բաժանմունքներում . . . . 11 դաս
Իրազննութիւն բոլոր ուսումնարանում . . . . 4 դաս
Երգեցողութիւն բոլոր ուսումնարանում . . . . 8 դաս
Այս ուսուցիչը եկեղեցու համար միաձայն խումբ պիտի կազմէ և ինքն էլ խմբապետութիւն անէ ու աջող ձայն ունենայ։
Գ. Ռուսաց լեզու բոլոր ուսումնարանում— 16 դաս (յունվարից+3 դաս)
Թւաբանութիւն I բաժանմունքում 5 դաս։
Այս ուսուցիչը ամեն օր կունենայ մարմնամարզութեան դասեր օրական 25 րոպէ։ Նա պէտք է աւարտած լինի կամ ռուսաց ուսուցչական սեմինարիան, կամ Ալէքսանդրեան ինստիտուտը։
Ուսուցիչներից իւրաքանչիւրն ստանալու է միմիայն ռոճիկ 700 րուբլի։
Ցանկացողները թող շտապեն իրանց խնդիրները և ուսման վկայականներն ուղարկել։ Առանց վկայականի խնդիրն անհետևանք կը մնայ։
Հոգաբարձութիւն
(ա. օ.) 728. 4—4

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.